

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révol. Arménienne.

ԴՐՈՇԿ

Adresse :

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶԵՏԱՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՈՒԺԸ

Երբեք նրա անհրաժեշտութիւնը այնքան խոր չէ գգացել ինչպէս մեր օրերում: Եւ այդ մենք տեսնում ենք, ամենօրեայ սուր քննադատութիւններից, որ մեր մամուլը ուղղում է ինքեղի գեղեցիկ երիտասարդութեան դէմ՝ հայրենիքի մէջ և արտասահմանում:

Ու՛մ շատ է տրւած — շատ էլ պահանջում է նրանից: Ինտելիգենտ ուժ — ստեղծագործող ու կենսարար ուժ: Պատմութիւնից նա ստանձնել է ծանր ու պատաւոր դեր: Բոլոր աղատական պայքարների մէջ նա եղել է առաջապահ: Բոլոր երկրներում նա գրկախառնել է աշխատաւոր ընդհանրութեան հետ, տոգորել է նրա տենչանքներով, փաստաբանել է նրա պահանջները:

Արեւմտեան աշխարհում նա մի դար շարունակ բուհականութեան պատուհասը եղաւ, մերթ հանգէս գալով իրրե դաւադիր, մերթ իրրե կուռք բարբիկադների վրայ: Ձեռքի աշխատաւորի հետ թե թեխ աւանդ՝ նա մեր ժամանակների ամենահերոսական կռիւները վարեց միապետութեան դէմ և յաղթանակեց: Նա նոյն աւելումով, նոյն անզուսպ մոլեգնութեամբ շարունակում է կռւել և կապիտալի բռնակալութեան դէմ, շարունակում է առաջնորդել աշխատաւոր մասսաները — տաքնապների, գոռ փոթորիկների միջից — դէպի արդարութեան վերջնական յաղթանակը:

Ոչ մի տեղ թերեւս իմացական տարրի այդ հզոր ազդեցութիւնը չէ արտայայտւել այնքան պայծառ կերպով, ինչպէս ժամանակակից Ռուսաստանի մէջ: Քսան տարի սրանից առաջ ռուս յեղափոխական ինտելիգենցիան գոցեց իր գործունէութեան առաջինը շրջանը, — մի պանծալի շրջան, որ լի էր հերոսութեամբ ու խանդավառ գաղափարականութեամբ: Նա մենակ էր — այդ ինտելիգենցիան: Մենակ անհատասար ու ահաւոր մենամարտում, հալածւած հասարակութեան բոլոր տարրերից, հալածւած նոյնիսկ այն անլիզուկ Վիսաստեածից, որի առջև նա ծուկն էր չորում կրօնական երկիւղածութեամբ, որի անունը ժողովուրդ էր...

Ռեակցիան վրայ հասաւ իր բոլոր մոլեգնութեամբ և հնձեց ինտելիգենցիայի ծաղիկը: Ծարի լայնարձակ կայսրութեան մէջ պահ մի թագաւորեց գերեզմանական լուութիւն: Մարեց ամեն ձայն. խաւարեց ամեն միտք:

Իգէալական թուիչները կանգ առան. գաղափարական մարտնչողների շարքերը սպառնցին: Մարդիկ մանրացան. հասարակական կեանքը զրկեց հրապոյրից:

Բայց խորագանով հաստատւած խաղաղութիւնը երբ է եղել յաւիտենական: Անցան տարիներ և ահա նորից խլրտաց ի նտ ելի գեղեցիկ ուժը, նորից հնչեց նշանախօսքը՝ «դէպի ժողովուրդ»... Այս անգամ ժողովուրդը ինքն էր կանչողը: Ինտելիգենցիային հալածում էր նա երբեմն — այդ ապերախտ ու անսիրտ քուրմը: Այժմ սթափւած՝ կանչում էր նրան իր մօտ, հիւրընկալում էր սիրով:

Եւ շարանշարան գնացին կրթածները՝ «անկիրթների» մէջ սուրբ կրակը վառելու. գիւղեր ու քաղաքներ հեղեղեցին նրանցով: Եւ աշխատանքը սկսեց, պրօպագանդը եռաց: Ինտելիգենտ ու բանւոր գրկախառնեցին: Համերաշխ ջանքերը արգիւնաւոր եղան և այսօր նրանց պտուղն է ահա ամբողջ Ռուսաստանի յեղափոխական խմորումը, որ նախանշանն է վաղւան Ռուսաստանի...

Անցքերի տրամաբանութիւնը ընդհանուր առմամբ նոյնն է ամեն տեղ: Հայոց կեանքի վերջին տասնամեակում մենք գիտում ենք խոշոր գծերով իրողութիւնների միեւնոյն ֆատալ յաջորդութիւնը: Ինտելիգենցիան այստեղ ևս սկզբում տարաւ իր ուսերի վրայ շարժման լուծը: 80-ական թւերին Բաֆֆի, Պատկանեան, Արծրունի ռազմականաաղաղակներով փոթորկեցին հայկական մըլթանորդաւ: 90-ական թւականների սկզբներում հայոց ինտելիգենցիայի զգալուն ներկայացուցիչները նեւտեցին կռի գաշտ: Ամբողջ կովկասը ալեկոծեց: Ամբողջ Արաբատեան դաշտը ցնծութեամբ գիւտաւորեց հայկական անդրանիկ արշաւախմբին: Ռապիտի թուիչները հայրենասիրութեան ու անաղարտ անձնութեամբ: Եւ ահա ճակատագրական հանգամանք՝ այստեղ ևս փառաբանւեց այն վիթխարի, բայց կոյր ուժը — ժողովուրդը: Այստեղ ևս նա դարձաւ խանդավառ պաշտամունքի առարկայ:

Ինտելիգենցիան կռի գաշտ իջաւ, գուրգուրանով այդ պող կուռքը, խոր հաւատալով նրա պատրաստականութեան: Միալեց: Մեծ Հայքը ըմբոստ էր տակաւին գաղափարի առաքեալների գիմաց: Յեղափոխական գիտակցութիւնը փոքրածիւ անհատների սեփականութիւն էր դու: Եւ ինտելիգենցիան հիասթափեց: Մի քանի հարւաճներ, կրելուց յեծոյ նա սկսեց արթնն կողէ կող:

գնալ Զարգերը լրացրին ամեն ինչ: Ռէակցիան, որի նմանը երբէք չէր տեսնուած յեղափոխական տարեգրութեան մէջ, իր բոլոր ուժգնութեամբ պայթեց հայ ժողովրդի մտածող տարրի վրայ:

Ինտելիգենտ ուժը շշմեւած, խելակորոյս՝ յետ ու յետ նահանջեց: Դէմօրալիզացիան, լքումը — ամեն մի նման ճգնաժամային դրութեան անխուսափելի ծնունդ — մտաւ նրա շարքերը: Աղետալի երևոյթ: Աղետալի՝ մանուշակալի պատճառով, որ ժողովուրդը դեռ չէր հասունացել զինուած կռիւի համար և որ նրան պատրաստելու ընդունակ էր միայն ճշմարիտ ինտելիգենցիան, գաղափարի ներկայացուցիչը, քանի որ հասարակական ուրիշ տարրերը — բուրժուազիա, հոգեւորականութիւն — ընդհանուր առմամբ յայտնի են իրենց ցինիկ անտարբերութեամբ դէպի ամեն մի գաղափարական գործ...

Դէմօրալիզացիայի նշան չէ՞ միթէ, որ երբեմնի կարմիր յեղափոխականը գործի ասպարէզից կամովին հեռանալով՝ փոխանակ պապանձելու և դասալքութեան արատը ծածկելու՝ փրփուրը բերնին դատափետում է յեղափոխական կազմակերպութիւնները և մերկացնում է եղած ու չեղած թերութիւնները:

Բայց պզտոր հոմանքը վերջ ունի: Հակայեղափոխական և այլ-ական վայնասունները դադար են առնում: Բարոյական տագնապը անցնելու վրայ է:

Հայ ինտելիգենցիայի շրջաններում երևում են սթափման նշաններ: Նրա ամենագլխուն մասը՝ ուսանող երիտասարդութիւնը ցոյց է տալիս առանձնապէս կենդանի հետաքրքրութիւն: Գերագոյն ժամանակը չէ՞ արդեօք, որ հայ ուսանողութիւնը երիտասարդական խանդավառութեամբ ինքզինքը նետէ պրօպագանդի մէջ և հայրենասիրութեան օրինակներ տալ հայոց անասնացող բուրժուազիային...

Եւթօր շարունակ ազատ ժընէվում 90-ի չափ հայ ուսանողներ Եւրօպայի այլևայլ քաղաքներից համախմբւած՝ լուրջ ու բանաւոր վիճաբանութիւններով լուսաւորում էին իրար՝ ընդհանուր ու այրող խնդիրների վերաբերմամբ: Եւրօպական բոլոր երկրների մամուլը ու շարժութեամբ արձանագրում էր հինգերորդ համագումարի որոշումները: Եւրօպայի հայ ուսանողական Միութիւնը՝ այսօր այլևս արհամարհելի մի մեծութիւն չէ: Նրա անգամներն արդէն հարիւրներով են հաշվւում և մօտ ապագայում՝ նա պիտի ընդգրկէ ամբողջ հայ ուսանողութիւնը՝ Եւրօպայում ու Ռուսաստանում: Նախկին անգոյն կանոնադրութիւնը յաղթահարւած է: Թիւրքահայոց խնդիրը այժմ՝ արդէն ուսանողական առաջնակարգ մտահոգութիւնն է. նրա ծրագրի կենտրոնը: Եւ հինգերորդ համագումարը, մի շարք որոշումներով, կարողացաւ յարգել իր ծրագիրը:

Որքան ուրախալի՝ այնքան և հրահանգիչ է Ուսանողական Միութեան փաստը: Նա ցոյց է տալիս, թէ որքան մեծ գործ կարող է տեսնել մի շնչին փորբա-

մանութիւն, ինտելիգենտների մի խումբ, եթէ նա զինւած է հաւատով և եթէ ունի նախաձեռնութիւն:

Յեղափոխական գործի առջև ծառացող խոչընդոտները հարթելու համար, այսօր, աւելի քան երբեք, ինտելիգենտ ուժ է պէտք: Նա է, որ պիտի թափանցէ հասարակութեան բոլոր խաւերը, պիտի փչըէ նրա սառցային անտարբերութիւնը, պիտի մաքառէ ամեն տեղ մեղկութեան ու յոռետեսութեան դէմ: Նա է, որ ձայնակցելով հայաստանցու յորդորներին՝ պիտի մտնէ բուն գործի ասպարէզը, պիտի ձուլէ հայրենիքի ցան ու ցրի ուժերը, հեղինակաւոր ու անկեղծ խօսքով պիտի ոգեւորէ նրանց և մղէ դէպի կազմակերպւած ու սխտէ մատիկ կռիւ:

Այո. ժողովուրդն ինքն է, որ փնտրում է «գործիչներին» — չէնք չափազանցնում: Մուշեցի, Սասունից, Վասպուրականից և բոլոր կողմերից մեզ հասնող նամակները միաբերան ու դառնութեամբ շեշտում են այդ պահասը:

Որքան քիչ ենք յեղափոխական դրօշակի տակ և որքան շատ կարող էինք լինել: Հրապարակի վրայ դնենք անկեղծօրէն մեր բոլոր կարողութիւնները, — մտաւոր, նիւթական ու ֆիզիկական — զոհաբերենք ինչ որ կարող ենք: Աւղղենք մեր ուշադրութիւնը դէպի այն կողմը, ուր ամենից շատ պէտք ունին մեր աջակցութեան, ուսկից լսում են օրհասական ազդակները: Փոխանակ ապարդիւն ժամափաճառ լինելու ներկայ ճգնաժամի հետ ոչ մի կապ չունեցող խակ ու անշնորհք մարզանքների մէջ, — միանանք բոլոր ինտելիգենտ ուժերու, համախմբւենք մարտական կազմակերպութեան շուրջը և ընդհանուր ջանքերով փչենք հայրենիքի յեղափոխական կայծերը:

Եթէ մենք ժամանակին պարտաճանաչ գտնւէինք, եթէ բոլոր ինտելիգենտներս՝ ըմբռնելով րոպէի հրամայական պահանջները՝ գործ դնէինք գէթ շնչին մասը մեր խելքի ու էներգիայի՝ Սասունը իր այսօրւայ ճգնաժամի փոխարէն՝ կը ներկայացնէր հզօր ու կազմ մի բանակ, որին դիւրութեամբ չէր մօտենայ թշնամին:

Եթէ ժամանակին պարտաճանաչ գտնւէինք...

Բ Ո Ղ Ո Ք

Ծիտում է խունկը աւեր տաճարում՝
Սուրբ խաչելութեան պատկերի առաջ,
Ցառապեալ հօտը հովւին է կանչում՝
Արիւնշաղախ, մերկ, լալահառաչ:

Իսկ տաճարի մօտ մայրեր, այրիներ
Գերեզմանատան նիրհը խանգարած,
Հողակոյտներն են արցունքով ծածկել
Եւ դարձեալ օրհնում քո կամբը, Աստուծ:

Բայց ո՛ր ես Աստուծ, ինչո՞ւ չես լսում
Հալածեալ հօտիդ աղերսը արգար,
Որ քո սուրբ անւան համար այս կեանքում
Արիւն արցունք է թափել դարէդար:

նա, որ ամէն բան գոհել քեզ համար
վանքեր, տաճարներ կառուցել չքեղ
Ար իր թանկ որդոց արիւնով արդար
ներկեւ քո անւան կուի դաշտն ահեղ
Եւ այսօր անգամ նեղ ճգնաժամին
Երբ հալածուում է անսիրտ, չարաչար,
կրկին քո գութն է հայցում լալագին,
Արհամարհելով մարդիկ և աշխարհ:
Նայիր այդ դողդոջ դալուկ շրթներին,
Որոնք քեզ հետ են խօսում այս կեանքից,
Քեզ, որ խոստացար քո հաւատարիմ
Ծառային փրկել չարից, փորձանքից:
Միթէ՞ գթութեան անգամ մի նշոյլ
Չլանում է քո սիրտը գթառատ,
Եւ միթէ բաւ է, որ մնաց նա խուլ
Մարգկային արիւն արցունքի առաջ:
Հատան սաղմոսի բառեր ու բարբառ,
Էլ խօսքեր չունին, որով աղօթին
Պղտոր արտասուաց ակունքը իսպառ
Ցամքեցան և արդ արիւն ծորում են:
Տես, էլ անբարբառ քո ստրուկ խեղճ հօտ
Տաճարիդ անգամ փոշին է լիզում,
Փրկութեան յուսով վերքերն արինոս
Քո սեղանների քարերին քսում...
Բայց գիտցիր, Աստած, որ քո ստեղծած
Ամենանգուլթ ոճրագործն անգամ
Գիտէ յետ աննել սուրը չնեղած
Արտասուիլ գոհերի արինով անպարտ...
Բայց որոնց քայլը դու անիծել ես
Վաղանցուկ կեանքի այս տանջարանում
Եւ որոնց համար տանջանքով պէս պէս
Դժոխք յարդարել անտի աշխարհում...
Իսկ թէ քո կուրծքը ծարաւ է դեռ
Լծիդ տակ հեծող ստրկի արեան,
Ահա պատրաստ եմ, արձակիր վճիռ
Եւ դատապարտիր ինձ անմահութեան:
Թաղիր ինձ ողջ ողջ գերեզմանի մէջ
Եւ շրջապատիր անմահ որդերով...
Բորբոքի խարոյկ գեհնում անշէջ,
Ուր նեւաւիմ անվախ, այլում դարերով:
Եւ կամ երկնքի բարձրում անկործան
Խաչ տնկիր ահեղ փշերից հիւսւած,
Ուր ես բեւեռած անվերջ, անվախճան
Քաւեմ մեղքերը հօտիդ... չգործած:
Կամ այլ տանջանքներ, որ աստուծային
Միտքը կարող է երեւակայել...
Լոկ թէ գորանով հալածեալ հօտին
Մի անկապտելի ազատ կեանք գնեմ:

ԱՅԱՐԱՆԻԻ

ՈՆԳՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ

Ինքն կուով ջնկերով նամակից հրատարակում ենք մէկ հոտուած
միայն ևւ այն՝ անփոփոխ, առանց խախտելու քննարկի անպատշաճ
ու կտրուկ զոր:

7 յունւար, 1902

... Նշխատեցանք նոր ընկերներ և մի քիչ պապ-
րաստութիւն ձեռք բերել, Ա. Առաքելոց վանուց մէջ

ամրանալ. բայց կառավարութիւնը միջոց չի տաւ, և
դեռ լիապէս չի պատրաստւած պաշարեցանք: Նոյն օրը
չորս հինգ զինուոր լիւ ունէինք: Եկան ներս մտնելու. այդ
միջոցին դէպքն սկսաւ, 2 մարդ մեզմէ սպաննւեցաւ, մէկը
Քր հին զինուորներէն՝ Յուրուզի Յարուլթիւնը,
միւսը զինուորաց հետ եկող ժողովրդէն՝ Կէլիէ-գուզանցի
Խաղար Լը չօյեան. ասոնց ներս առինք և
20 օր դէպքը շարունակեցաւ: Չորս կողմերնիս պաշա-
րած թշնամեաց կողմանէ թէ սպաննւած և թէ ցուրտէն
ստոած սատկած 50-ի կը հասնի թիւը. հիւանդանոցնր
ցարդ լեցուն են և մահ անպակաս մէջներին: Դէպքին
չորրորդ օրը բանակցութեան մտանք կառավարութեան
հետ. առաջին անգամ իրենց կողմէ նամակ մը գրուե-
ցաւ մեզ առաջնորդարանի ձեռամբ, որպէս զի սեւ ձեռով
կերպերով զմեզ կամ անձնատուր ընէ կամ դուրս հանէ:
Բայց մենք կարեւորութիւն չտալով՝ երեք օր միջոց ուզե-
ցինք պատասխանելու. բայց իրենք իր փախցոյց տալու
մեզ, վանքի առաջնորդը տոմսակաւ մը զրկեցին՝ և կաւ
վճռական պատասխանը ուղելու, թէ ոչ ուժգին գոր-
ծողութեանց պիտի ձեռնարկէ. կրկին պատասխանեցինք
թէ, առաջարկութիւննիս վճռական է, 3 օր պայմա-
նաժամ պէտք է տրուի, եթէ ոչ ուզածը թող ընէ: Այդ
գիշեր ժամը երկուքին արշաւանք բրաւ, ներս լեց. իլ
ուզեց, բայց անպարզին, իր նպատակին չի հասաւ:

Անբաւաւ երեք օր զինաձգութիւն անպակաս շարու-
նակելէ յետոյ, կրկին տոմսակաւ պատասխան խնդրեցին.
առաջարկեցինք թէ, մէկ կոմիտէ և երկու առաջնորդ
պէտք է գան, անոնց պիտի յայտնենք նպատակնիս.
ուստի և դէպքին 11-րդ օրը եկան 2 կոմիտէ և 2
առաջնորդ. ներս առինք երեք ժամ խօսեցանք: Խօսակ-
ցութեան շսկած իմացանք անոնցմէ Անգլիոյ հիւպա-
տոսին քաղաք վերադառնալը, նաև Ռուսիոյ հիւպատո-
սին օրթոգոքութեան պատճառաւ մի խնդիրներ կր
մերժէ, որով ծրար իրենիս փոխեցինք. առաջարկեցինք թէ,
նպատակնիս է անձնազոհ լինել ազգերնու իրաւունքը
պաշտպանելու համար, և թէ չիրագործուի պահանջնիս
պիտի կուինք ու մեռնինք:

Ա) Քաղաքական տեսակէտով ձերբակալւածներ ար-
ձակել:

Բ) Սպահանայ սրածութիւնք և վառելը, Հիմանայ
և Շուշաձերկի այլերն և մի քանի մարդոց սպանութիւնք,
հատուցում ընել:

Գ) Ըստ կառավարական օրենի գիւղը չի պէտք է ծախի:

Դ) Այս տարի ամրան կառավարութեան հրամանով
տեղի ունեցած հարստահարութիւնք և սպանութիւնք
Դաշտի մէջ, որ 50-60 անձէ աւելի սպանեցան պէտք
է դարմանել:

Իրենք ալ իրաւունք տւին մեր առաջարկած պահան-
ջաց, խոստանալով որ անպակաս պիտի հեռագրեն սուր-
թանին և պաճիրիարքին և ատոնց դարմանելուն պիտի
նայալ Մենք ալ առաջարկեցինք որ, մեր բողոքներու,
պատասխանը մինչև որ սուրթանի, Պալիս գտնուող դեւ-
պանաց և պատրիարքին կնիքով կնքւած չի գայ, հետա-
գրով նոյնիսկ գալու լինի ալ դուրս չի պիտի ելլենք:
Եւ երբ կնքւած գայ՝ ձայներնիս լսելի եղեր է և ըստ
այնմ պիտի վաւերացնենք մեր կողմանէ և տպա դուրս
գանք: Առաջարկութիւննիս բոլոր յանձն առած մեկնեցան
և 8 օր յետոյ պատասխան ևկաւ պատրիարքի կողմանէ
հեռագրւած սատրապալի վաւերացմամբ, թէ երբ անձ-

„Ահաւաստիկ գեկտեմբեր 22-ին Նորշէն գիւղի մէջ
դէպք մը տեղի ունեցաւ: Ութ զինուոր վար զրկած էի,
երբ հոն հանդիպան մատնութեան. դէպքի բռնած
երկու հարիւրապետ, երեք չորս զօրք և քանի մը ձի
սատկեցուցին և Տիրօջ օգնութեամբ անփնաս ազատ-
ւեցան“.

ԱՆԻՐԱՆԻԿ

1905

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՏԻ ՊԱՐԻՉՈՒՄ

Ապրիլի 5-ին Պարիզում մի համաստ սեղանի շուրջը հաւաքւած էին քսանի չափ հայասէր եւրոպացիներ, որոնցից մի քանիսը անգլիացիներ էին. Էտկին, անգլո-հայկական ընկերութեան քարտուղարը, Ստէյնլէն, նշանաւոր արեւստագէտը, Կրովֆորդ, Daily News-ի թղթակիցը, ապա Բերլինի Lokal Anzeiger-ի թղթակիցը և շատ ուրիշները: Ներկայ էր և դանիացի հաշակաւոր կրիտիկոս Ժորժ Բրանդէս: «Պրօ Արմէնիայի» խմբագրական կոմիտէից ներկայ էր դր Ռօբերտի, մնացածները ընտրութիւնների պատճառով բացակայ էին Պարիզից: Բացակայ էր և Քիառ, որը դեռ գտնուում էր Վօնակոյում խաղաղութեան կօնգրէսի պատճառով:

Բանկետի միջոցին բազմաթիւ նամակներ ու հեռագիրներ ստացւեցին բացակայ հայասէրներից—Պրեսանսէից, Դէմոկրատիկ դը Կօնստանտինոյ, Դընի Կօչէնից, Քիառից, Վիլլէից, Լափսից և այլն:

Ահա թէ ինչ էր գրում Պրեսանսէն պ. Նախագահին.

«Ստիպողական մի պարտաւորութիւն կանչում է ինձ Լիօն: Սաստիկ ցաւելով, որ այս ձախորդ պարագան զրկում է ինձ հաճոյքից՝ հանդիպելու հորիզոնի բոլոր կէտերից եկած, բոլոր ազգութիւնների մարդկանց, որոնց ի մի է գումարել ընդհանուր սէրը դէպի մի նահատակ ժողովուրդ — ես միթաւում եմ յուսալով, որ գտնէ ես երբէք չեմ գլանալու իմ աջակցութիւնը ամէն անգամ, երբ պէտք կը լինի աշխատել ձեր երկրի համար, լինի դա գրչով, լինի խօսքով, մամուլի մէջ կամ կօնֆերանսներով — ինչպէս որ նորեքս պատիւ ունեցայ անել ժը-նեում» «Եւրոպայի հայ ուսանողական Գիւղթեան» նախաձեռնութեամբ — ես երբէք չպիտի գլանամ իմ աջակցութիւնը, երբ հարկաւոր կը լինի փաստաբանել ձեր իրաւունքները, ընդգէմ ձեր բռնակալիւ Պրօ Արմէնիան», որ այնքան անձնիրութեամբ ու տաղանդով խմբագրում է մեր բարեկամ Պիէռ Քիառ և որի ղեկավարութեանը ես ինձ երջանիկ եմ զգում մասնակցել այնպիսի մարդկանց հետ, ինչպէս Անատոլ Ֆրանս, Կլէմանսօ, Ժօւլէս և դր Ռօբերտի — «Պրօ Արմէնիան» զանազան հանգամանքների պատճառով բախտ չունի այսպիսի մի օր ներկայացւած լինելու, ինչպէս հարկն է դուք ինձ թոյլ կրտաք նրա անունից հաստատելու նրա խմբագրութիւնը ամբողջապէս սրտով նրանց հետ է, որոնք կօչում և տանջում են Հայաստանի համար»:

Ե. դր Ռօբերտի «Պրօ Արմէնիայի» խմբագրական կոմիտէի կողմից ողջունեց անգլիացի հայասէրներին, որից յետոյ Էտկին խօսեց հայկական խնդրի մասին, շեշտելով այն միտքը՝ որ բոլոր երկրների հայասէրների իրարու հանդիպելը դեռ բաւական չէ, այլ անհրաժեշտ է, որ նրանք միացնեն իրենց ջանքերը և կազմակերպւելով՝ որոշեն իրենց գործողութեան միջոցները:

Ժորժ Բրանդէս, որ մէկն էր առաջիններից, որ Եւրօպայում ձայն բարձրացրեց յօգուտ հայերի՝ սրամիտ մի ձառով իր համակրանքը յայտնեց տաճիկ կառավարութեան զոհերին: Նա զարմանք յայտնեց մամուլի յանցաւոր թեթեամբութեան առթիւ — մամուլի, որ լցնում է իր սխեմաները աննշան իրողութիւններով, յուզում է մի քանի անհասկանալի սպանութիւններով, բայց հնարաւոր չի գտնում բողոքել մի ամբողջ ժողովրդի բնաջնջման դէմ:

Այնուհետեւ խօսեց պարլամենտի անդամ Մարսէլ Սամբա: Ցաւում եմ, ասաց նա, որ բացակայ են Դընի Կօչէն և Դէմոկրատիկ դը Կօնստանտինոյ, որոնց ներկայութիւնը այստեղ կը խորհրդանշէր բոլոր կուսակցութիւնների միութիւնը հայկական հարցում:

Հայերի կողմից խօսեցին բժ. Լօուիս-Մելիքեան և պրօֆէսոր Գամբարեան: Առաջինը ծանրացաւ «Պրօ Արմէնիայի» հիմնադրութեան խնդրի վրայ, յայտնեց, որ թերթը ապահովում է ազքատ ժողովրդի լուսաներով և որ մեր հարուստ դասակարգը ոչ մի աջակցութիւն — ոչ նիւթական և ոչ բարոյական — չի ցոյց տալիս: Խօսեց հայ ինտելիգենցիայի և բուն հայ ժողովրդի առաքինութիւնների մասին: Նկարագրեց հայկական պայքարը, նրա յոյսերը, նրա առջև կանգնած խոչընդոտները:

Պրօֆէսոր Գամբարեան մի գիտական ձառի մէջ շեշտեց հայոց հարցի միջազգային բնաւորութիւնը:

Դրանից յետոյ Էտկին, Սամբայի, Բրանդէսի և դր Ռօբերտի առաջարկութեամբ ընդունեց հետեւեալ որոշումը.

«Հայաստանի այս միջազգային ժողովը որոշում է, որ բոլոր երկրների հայասէրների մի խորհրդաժողով սեղի կուշենայ ըստ կարելոյն շուտ Բրիւսսէլում: Նա իրեն նպատակ կը դնէ գլխաւորապէս հայկական հարցը պարլամենտների առջև հանել»:

Այդ խորհրդաժողովի նիւթական կազմակերպման նպատակով համար՝ Էտկին տւեց անգլո-հայկական կոմիտէի կողմից 500 ֆրանք:

ԴԱՆԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Մի խումբ ամէն դասակարգի պատկանող դանիացի հայասէրների ուղղել է «Պրօ Արմէնիայի» խմբագրական կոմիտէին հետեւեալ նամակը:

Կօպենհագեն, մարտ 5 1902

Pro Armenia թերթի պատւարժան

Խմբագրական կոմիտէին

Պ. Պ. Ժ. ԿԼԵՄԵՆՍՕ, ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ, Ժ. ԺՕՌԵՄ, Փ. ԴԸ ՊՐԵՍՄԵՍԸ, Է. ԴԸ ՌՕԲԵՐՏԻ, Պ. ԶԻՆՈՒ:

Ամէն մէկը, որ դեռ պահել է իր սրտում փոքր ինչ մարդկային զգացմունք՝ համակրում է այն գործին, որ ձեռնարկել է Pro Armenia-ի խմբագրական կոմիտէն — հրապարակ հանել իրերի չափազանց սարսափելի վիճակը Հայաստանի թիւրքական նահանգներում և ստեղծել հանրային կարծիք ի նպաստ բազմաչարճար ժողովրդի:

Բախտաւոր ենք զգում մեզ նկատել՝ որ մեր հեռաւոր ու շատ փոքրիկ երկրում՝ Հայաստանի քրիստոնեաների անլուր տանջանքները կենդանի հետաքրքրութիւն և կարեկցութիւն շարժեցին, և 1896-97-ին 100,000 ֆրանկ համեմատաբար խոշոր մի գումար հանգանակւելով՝ ուղարկեց հայերին: Մենք դեռ ունենք Կօպենհագենում տիկիների մի ակումբ, որը աշխատում է մի որբանոց հիմնել Հայաստանում:

Բայց համակրութեան այդ ցոյցերը, ինչպէս և Հայաստանի մէջ ուրիշ ազգերի կողմից ձեռնարկւած զանազան բարենպատակ գործերը՝ կաթիլներ են միայն տանջանքների այն ծովի մէջ, որ Հայաստան է կոչւում:

Եւ ահա միտք ծագեց մեր գլխում, որ այդ ամէն կերպ

տամբներ չենք, մենք եղած անիրաւութիւններուն դէմ բողոքողներ ենք միայն:

Վարդապետը կըսկսի յորդորել որ անձնատուր ըլլան և թէ ա ֆ վ ի շ ա հ ա ն է (կայսերական ներում) բերել կուտայ: Կըսպառնան վարդապետին խրատելով որ տեղը ծանր նստի և այդպիսի յիմարութիւն չ'ընէ:

Երեկոյեան դէմ մեկնելիս, վարդապետը կ'ազդարարէ անոնց որ Ֆէրիք փաշան մտադիր է քնդակահովել վանքը. Անդրանիկ ծիծաղելով մը կ'ըսէ Վենք անոնց թնդա-նութիւններուն ու հրացաններուն ուժն ու զօրութիւնը պիտեմք, և եթէ մենք ուզենք երթալ, որ ժամանակ ուզենք կանցնենք կերթանք: Եւ այնպէս ալ ըրին. նոյն իրիկունը երկու հազար պաշարող բանակին մէջէն անմիաս անցան քացին...

Շունուդին օրը միտալով կանչելով Խոսրով վարդապետը կ'ըսէ անոր որ այս չարեաց առջևը անկեղծ է. — Այդ մարդիկը ոչ մեծ կը ճանչնան ոչ գլուխ, ի՞նչպէս կրնամ համոզել որ ետ կենան իրենց գործերէն, կը պատասխանէ վարդապետը...

Կը լսենք որ լեռն ալ կուր եղեր և քանի մը զարթիւ և պինպաշի մը զարնւեր են...

II

31 յունւար, Մուշ

Ֆէդայիներուն քաջութիւնը մեր թշնամիներուն իսկ սրանչացում պատճառած է. եւրօպացիները Տէվէտ զօրավարի քաջութեան ու խորամանկութեան վրայ կըսքանչանան, բայց թէ Տէվէթի մէկ հարիւրերորդ ուժը Անդրանիկի ու Գէորգի քով ըլլար, արդէն մենք շատոնց ազատւած էինք: Իրօք մեր ազգին մէջ գիւցազուններ պէտք է համարիլ անցիւր գարնան Բերդակայ դէպքի Գէորգ և իր հինգ ընկերները, որոնք 2,000 թիւրքերու և քրդերու դէմ առաւելէ մինչև իրիկուն պատերազմելով երեք հոգի թշնամիէն սատկեցնելէ ետք անմիաս դուրս եկան: Նոյնպէս Առաքելոյ վանքի յանդուգն դիմադրութենէն ետք, Գէորգ իր հինգ ընկերներով ն օր չէն գիւղի մէջ պաշարւած էր Մուշէն յատուկ շրջաւոր քաղաքի մէջ գործերէ. երկու ժամ կուրէ վերջ, ժանտարմի իւղբաշի Հիւսէյին աղան «չէհիտ» ընելով, անմիաս հեռացաւ: Այո, պէտք է որ այս տեսակ մարտի հերոսները պահելու ու պահպանելու, ապագային պէտք պիտի գան անոնք, հայրենիքի սրբազան ու արիւնքալի դատին յաջողութեանը համար...

III

1 փետրւար, Մուշ

Առաքելոյ վանքին մէջ պաշարող հայ խումբը, ժող 50 հոգի, լման 20 օր մնալէն ետք, 21-րդ օրը ստիպեցաւ դուրս ելլել պաշարի պակասութեան պատճառով. որովհետեւ վանականներով և որսերով մէկտեղ պաշարողների թիւը 150-ի կը հասնէր: Անդրանիկ ջան այս պարագային ռազմական զարմանալի ծարպիկութիւն ցոյց տուաւ. երկու հոգի, Գէորգ 2-րդը և մշեցի հաճի Յակոբ, որովհետեւ ձիւնապատ էր, շփոթելու համար ձերմակ զգեստով դուրս կը հանէ, որոնք մօտենալով պահապան զինուորներին, «էյ Մուսթաֆա, կ'ըսեն, այսօր լաւ հրակեցէք, զի հրաման եկած է որ առաւօտուն վանքը թնդանօթի պիտի բռնուի. լաւ պահեցէք որ Ֆէդայիները այս գիշեր չի փախչին»: Խօսքի բռնեամբ ժամանակին,

Անդրանիկի խումբը, 50 հոգի, կամաց մը կ'առնէ կը քալէ: Յանկարծ ուրիշ պահապան զինուոր մը կը պօռայ. «աման, ջան ֆէդայիէր գաջըօրլար» (ջան ֆէդայիները կը փախչին), իսկոյն երկու ֆէդայիներ վրայ կը հասնին և կըսպանան որ չ'աղաղակէ. զինուորը իմացածին որ յեղափոխականների հետ է գործը, լեղապատառ չեզուն կը բռնէ: Ֆէդայիները առանց միասնելու զինուորին ճամբանին կը շարունակեն, միմիայն Ցերգեանից Երահուտի Բարսեղը զիպւածով կըսպանուի իր ընկերներէն: Տղայք անհետանալէն վերջ, առաւան ժամը 6-7-ին թիւրք զինուորները կը մօտենան վանքին, որուն դռները արդէն բացուած էին, և կըսկսին աւրշտկել վանքը. զինուոր մը վանահօր Երուսաղեմայ շապիկը ծախելիս բռնեցին և առին ձեռքէն:

Թիւրքերը շարած մնացեր էին և ֆէդայիներուն փախուստը հրաշքի կը վերագրէին: Իսկ թուրք զինուորները արդարացնելու համար լուր հանեցին թէ Ֆէրիք փաշան քանի մը հարիւր լիրայ կաշառք առեր է ֆէդայիներէն: Գէորգը Ռամազանի մէջ պատահելով, թիւրքերը Սայիդ էֆէնտին, որ Մշու Ալու ճամփին քարոզիչն է, կը հարցնեն. «հօ՞՞՞ն ինչո՞ւ քարոզ չես տար»: Հօ՞՞՞ն ուրբաթի աղօթքին աստեւ կը համարձակի ըսել. «իսլամի կրօնքը խախտած է. Ֆէրիք և կուսակալ փաշաները կաշառք ուտելով փախցուցին յեղափոխականները. չէ՞ որ եթէ մեզի հրաման տային, մենք վանքին հոդն ու քարը հացի տեղ կուտէինք»: Ֆէրիքը այս լսածին, հօ՞՞՞ն բանտը կը նետէ, ուր ամիս ու կէս է կը ձգնէ: Քաղքին մէջ նեղութիւնը այնքան խիստ չէ, բայց փիւղերու վիճակը անտանելի է:

Փախուստէն տաս օր անցած էր, երբ լուր ելաւ թէ տղերք Խէյրի գիւղի մէջ բռնուած են, թիւրքերը աս լսածնուն փրփուրը բերանին վազեցին գացին որ բռնեն հում հում ուտեն, բայց ամօթով ետ դարձան:

Անդրանիկը, որ գաւառները կը գտնէր, այնպէս հասկցեր էր թէ Ղզլաղաճայ Արմենակ և ուստիացի Սարգիս եկած ու բռնուած են, ատոր համար 30 զինուոր հոգով եկաւ Փեթար գիւղ, բայց իսկոյն լուր տուին որ ետ դառնայ, ըսելով որ այդպիսի բան չի կայ: Գէորգ չափուշը միայն քանի մը ընկերներով գնաց ստակ հաւաքելու. 4-5 օր պտտելէ ետք ճիշդ գիւղու. 23-ին մատենեցաւ նորչէն գիւղի մէջ: Ահա մեր նատարեց Հիւսէյին աղան, ոստիկաններու հարիւրապետը, թիւրքերու մէջ համբաւաւոր պապարկիդ հսկայ մը, անմիջապէս գունդ մը հեծեալ ոստիկաններով արշաւեց նորչէն: Թիւրքերը կը հարցնեն. — Երթալդ խե՛ր է՞ Ֆէդայիներու ետեւէն կերթամ. կամ ողջ կը բերեմ կամ դիակնին. — Բայց չըլլայ որ դուն քեզ վրայ տաս, հեղուորին կ'ըսեն իրեն:

Հիւսէյին հազարապետը կը հասնի նորչէն: Տղայք խմբով դուրս կ'ելլեն. հազարապետը տեսնելուն կըսկսի հետապնդել. տղայք քիչ հեռացածնուն, ետ կը դառնան, գնդակի քանի մը հարեւորով վիթխարի Հիւսէյինը վար կը գլորցնեն ձիւն ու ուրախութեամբ կը շարունակեն ճամբանին: Բայց Գէորգ չափուշը երկու ընկերներով և Բօնտոյեան Վաղարշակ դեռ գիւղն էին, բարձր տանիքի մը վրայ կ'ելլեն և հրացանի կը բռնեն թիւրքերը, որոնք սարսափահար կը քաշին, երեսի վրայ ձգելով Հիւսէյին հարիւրապետի անշունչ մարմինը, որ մինչև առաւօտ դուրսը կը մնար: Յաղթական տղայք ապահով իրար

կը գտնեն նորէն: Յաջորդ օրերուն թիւքերը սոսկալի աւարտութիւններ ըրին և 10-20 մարդ ալ բանտարկեցին: Առին մէջ թիւքերէն քանի մը հոգի մեռան և քանի մը հատ ալ ձի. յիսնապետ մըն ալ վիրաւոր պառկած է, որովհետեւ Ֆէդայիի գնդակը անոր սուրին դպելով չէր յաջողած մահացու ուժը տալ անոր:

Երկրորդ օրը Հիւսէյնի գիակը քաղաք բերելիս, թիւքը ահագին խուժան մը քնդառաջ գնաց, ակոյ կճրցնելով հայերուն դէմ, զրոնց չկրցաւ դպիլ, երևի արտաքին ազդեցութեան մը շնորհիւ:

Յաջորդ օրը շուկային մէջ թիւքերուն բերնէն սահեցնական խոսքեր կը լսուէր. «Հիւսէյնին ալ կերպք, եթէ մարտեցիր, լաւ»:

Կաթողիկոսներու վարդապետը, փոխանորդ հայր Անանիա և Պօլէեան Ստեփան աղան փաշային կը ներկայանան, նորչէնի վիճակի մասին տեղեկութիւն տալու համար. փաշան լրբութիւն կունենայ ըսելու. «Ինչո՞ւ եկեր էք. կը տեսնէք, Մոկուշի պէս պիտի ըլլայ նորչէնը»: Խեղճերը գլխիկոր կը վերադառնան:

Յեղափոխական զինւորները ահ ու սարսափ ազդած են այսօրի թիւքերուն և կառավարական շրջանակներու մէջ: Բոլոր Ֆէդայիները ընտրւած անվեհեր տղամարդիկ են: Գէորդ չափուշը, ջան, հոգի է, լման 17 կուր բռնակը բոլորէն ալ պնդաս գուրս պրծած է. հասակը կարճ, 35 տարեկան, քիչ խօսող, խոհեմութիւնը միացնող իր անվախ և անբասիր քաջութեանը հետ:

Երեք ափս է թիւք զինւորներուն մէջ սարսափելի հիւանդութիւն մը ինկած է. օրական 2-5 մարդ կը տանի. անոնց հրամանատար հաղարապետը ևս շատ հիւանդ՝ խելքը կորսնցուցած է, այնպէս որ բժիշկները յուսահատած են: Ֆէրիդ փաշան ևս զգայութիւնը կորսնցուցած, մեռնելու վիճակի մէջ է:

Առաքելոց վանքը զօրք լեցուցած են, էզանի ժամանակ եկածին, մէկը կ'ելէ զանգակատան գմբէթին մէջ կը կայնի «Ալլահ էքպէր» կը պօռար:

Նորչէնի բանտարկեալները, երևի դեռսպանի շնորհիւ, ազատ ձգւած են, բացի էրզրումցի դարբին Սեդրակէն և մէկ գիւղացիէ: Բայց ատոր փոխարէն ծեծ, հայհոյանք, ուրիշ կարգի նեղութիւններու հաշիւը չի կայ: Տուրքի համար սուր սուր ժանիքներով ձեռնակապեր հնարած են, եթէ ձեռքը անցնեն մահու չափ չարչարանք կը պատճառէ ամբողջ միսը ծակկելով:

ՎՈՒԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ ԴՐԱԽԱՇ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՔԱՂԱՎՈ

1901 թ. Յունիս 16 ա մ ա թ իւ ն ա մ ա կ է ն. —

Ամառան տօթագին օրերուն մէջ ենք: Աշիրէթներու և պաշտօնեաներու նօթութիւնն առաւել քան երբեք երևան կուգայ և շահատակութիւններ կը գործեն: Առաջիններն՝ պարտութեամբ, արիւնահեղութեամբ և առեւտրութեամբ (որովհետեւ տաքութիւնը աշիրէթներու ջերմին ալ կը գրգռէ), միւսները բարբարոսական թաւ հասիլաթով: Չանձրացայ գրելէ: Ա՛լ խեղճ ու թշուառ ժողովուրդին մեղքը կեդրոնական վարչութեան վիզը:

Յունիս 7 ն ա մ ա կ է ն. — Վիճակիս մէջ գտնւած գայմազամանիստ աւաններու ազգայինները կուզեն որ

կառավարութիւնը, իրենց գիւղէն ելլէ և ուրիշ տեղ մը հաստատուի, որպէս զի անոր պաշտօնեաներուն ու զօրքերուն բազմաթիւ զոհանքներէն ու անկարգութիւններէն ազատ մնան, այնպէս են զօրօրինակ Տ. ի ու Չ. ի ազգայինները: (Անցեալ տարւան տեղեկագրովս այս մասին երկարօրէն գրած եմ):

Եւ իրաւունք ունին, որովհետեւ կառավարութեան ներկայութիւնն՝ պաշտպանութիւնը պիւրութեան և օգուտ չունենալէ զատ, գաւազան չեղծունեւորու, զոհանքներու և խայտառակութեանց պատճառ կ'ըլլայ և ժողովուրդը կը կեղծբերի ծանրապէս:

Յունիս 12 ն ա մ ա կ է ն. — Ստացայ ձեր ամենապատուութեան յունիս 20 թւակիր նամակը, որով մայիս 12 թւակիր տեղեկագրին նկատմամբ կարեւոր ձեռնարկներն իգործ դրելով ծանուցանելով՝ կը յանձնարարեք որ ժամանակին «հանգամանքներն ու դժուարութիւններն նկատողութեան առնելով» չթողուք բոլոր գործը կեդրոնին վրայ, այլ տեղական միջոցներով կարելին իգործ դնել:

Բայց խոնարհաբար դարձեալ և միշտ կը յայտնեմ թէ, այսպիսի միջավայրի մը մէջ, տեղական միջոցներով, տեղապահ մը չկրնար ոչինչ գործել, երբ մանաւանդ իբր միմիայն հոգեւոր պետ — րէխի րուհանի — և ոչ Առաջնորդ ու ի տար է նստող և ձայն ունեցող ըլլայ այն:

Յունիս 19 ն ա մ ա կ է ն. — Ստացայ ձեր ամենապատուութեան յունիս 30 թւակիր նամակը, որով կը յանձնարարեք մեզ, ակարելին իգործ դնել պահպանելու համար ազգային հասարակութիւններն, գէթ իրենց արդի վիճակի մէջ:

Խոնարհաբար կրկնելով հանգերձ թէ արդէն մինչև հիմա այդ նպատակին համար պէտք եղածն չէ զուցւած իմ կողմանէ, հարկ կը համարեմ ցաւ խորա յայտնել ձեր սրբազնութեան, թէ վանքերն, եկեղեցիներն և դպրոցներն կրնանք պահել իրենց արդի վիճակին մէջ (այսինքն իբր շէնք միայն ու ան ալ աւերակ կամ կիսաւեր), բայց ժողովուրդը: Այդ նւիրական շէնքերը ինչո՞ւ կրնան ծառայել, եթէ իբր շէնք միայն մնան ու ժողովուրդէն թափուր ու լքւած ու քիւրդերու և ալլապգեաց ճիրանին մէջ մնացած խաղալիկ, ինչպէս է Ս. Ա. ի վանքը, մեր վիճակին մէջ և հարիւրաւորներէրը ամբողջ մեր աշխարհին մէջ: Առածին ըսածին պէս «Պուրը ջաղացքն է տարեր, մենք ջախջախը կը փնտռենք»:

Օգոստ. 10 ն ա մ ա կ է ն. — Ստացայ ձեր յունիս 28 թւակիր նամակը, որով մայիս 5 թւակիր նամակին (յետեանալ և ներկայ տուրքերու մասին գրւած) ի պատասխան կը յայտնէիք թէ «իրաց վիճակը յատուկ թագրի իրով մը Արդար. (?) գործ. նախարարութեան ուշադրութեան մատուցինք ելն, ելն, ելն»:

Թէ՛ այս առթիւ և թէ՛ ուրիշ կարեւոր նամակ-տեղեկագիրներուս առթիւ ձեր թագրիներու և կարեւոր ձեռնարկ-տնօրինութիւններու համար երախտապարտ ըլլալով հանգերձ, խոնարհաբար սա կէտը կը յայտնեմ թէ, այդ թագրիներն կամ թէտպիրներն որո՞ք չունին և արդիւնք չեն յուցներ (գէթ այստէս տեսայ եւ 2 տարիէ ի վեր, որովհետեւ (թագրի-թէտպիրներն) դէօ՞չ է կալ թը կ'ըլլան Բ. դրան մէջ և ուրիշ — ժամանակիս քաղաքականութեան և իսլամական մոլեռանդութեան պահանջած — թալիմութեան են, որ կ'ողուին այս կողմերը: Եւ աներկմիտ եղէք որ չպիտի դադրին երբեք հոս խտութիւնները, հարստահարութիւնները, կրօնա-

փոխութիւններն և աշխարհափոխութիւններն: Չուառ ժողովուրդն շատոնց զըկած է ինքնապաշտպանութեան ամէն միջոցներէ, գրիչէն-դպրոցէն, խաչէն-եկեղեցիէն և յետին ապաւենն եզոզ ափ մը հողէն ու քրիչէն: Այս է իրականութիւնը և ժամանակիս քաղաքականութիւնը...

Ապա ի՞նչ է կրնար, ուրիշ թագրիր-ծրագիրներ յղացէք և իզարծ Դրէք ազգը չփճացած:

Դրեթէ ամիս մ'է որ Տ. եկած եմ հոգեւորապէս այցելելու և միութարելու մեր անմիութար ժողովուրդը: Գալէս-փոքր ականատես և ականջալուր ըլլալով Տ.-ցիներու եգիպտական (իմա՛ զօտխային) տառապանքներուն, սիրտս կտոր կտոր կ'ըլլար:

Երրորդ անգամն է որ Տ. կը հանդիպիմ և տեղական միջոցներով չկրցայ յաջողել վարժարանը նորոգելու: Այս տարի ագարակատուն կամ շտեմարան յարգանոց-հիւրանոցի կերպարանքի տակ ներկայացուցի խնդիրն միւլթասարիֆին, որ Էլբաստիկ յանձնարարական մը ուղղեց գալմա գաւառի թեման: Արջինս յանձնարարականի — է վագրի միւլթէլէլէին առջև կանգ առնելով՝ երկայն բարակ մտմտութի, փնտռութի և ձգձգութի մէջ խորասուզեցաւ: Արջապէս տեղեկագիր մը գրեց միւլթէսէրիֆ թեման որպէս զի վերջնական վճիղը արձակէ... Սպասէ՛ ու համբերէ՛...

Իսկ 3-4 տարի տուաջ Տ.-ցիներու դրամով ու արիւն-քրտինքով շինւած և յետոյ պաշտօնեաներու կողմէն կործանւած և փայտ-գերաններու արժէքը կու տուած պահակատեցը այսօր վերաշինելու կը ձեռնարկեն միւլթոն պայմաններով, այսինքն Տ.-ցիներուն քսակով ու ձեռքով ձիշտ ճամբուն վրայի երեք աղբիւրներու մօտ, որոնցմէ օրն ի բուն գեղին կանաչքը ջուր կը կրեն: Եկո՛ւր աներկմիտ եղիր որ...

Օ գ ո ս տ ո ս 17 ն ա մ ա կ է ն. — Մեր վիճակին մէջ տիրող անապահովութեան և դառնագին կացութեան մասին, կը խնդրենք որ ձեր ամենապատուութիւնը շնորհ ընէ ազգու կերպով միջնորդ ու բարիխօս կանգնել հպատակաւորդարասէր վճ. կայսեր առջև, որպէս զի չի ջարդի, չի ջնջի մեր խեղճ ու թշուա ժողովուրդը երկու սուրէն, այսինքն աշխրթներու սպանութեանց ու հարստահարութեանց երեսէն և կառավարական պաշտօնէից զեղծութեան և մեքենայութիւններու երեսէն: Ի սէր Աստուծոյ, վճռական տնօրինութիւն մը, արմատական բարեկարգութիւն մը, ազգը կը կորսուի այս կողմեր...

Ս ե պ տ ե մ ք. 8 ն ա մ ա կ է ն. — Ինչպէս ազգ. թերթերը կը հաւաստեն «կարճառօտ արձակուրդի մը մտած է Ազգ. Պատրիարքարանը»: Արժան և իրաւ, ամէն վարչութիւն, ամէն հաստատութիւն արձակուրդ ունի, Պատրիարքարան ալ պէտք էր ունենար: Տէրը զօրացուցէ և կազդուրացուցէ:

Բայց մեր վիճակին մէջ արձակուրդ չունին բնաւ աշխրթներն, իրենց բաղնուքին և արիւնահեղութեան, առեւանգութեան և կապուտ կողովուրտի համար, և կառավարական պաշտօնեաները՝ անողոր ու անհասուն մթնոլորտի մէջ և մեքենայութեանց և զեղծութեան համար: Մ.-ի Մ. փնջային (Համիդիէ) և Շ.-ի Մ. աղային խնդիրը արդէն ոչ արձակուրդ ունի և ոչ ալ լուծելիք և կը յուզէ միշտ Պ. գաւառը: Իսկ Ղ. կը յուզեն և կը խռովեն միշտ Պ.-ի 2. և Ա.-ի Օ. աղաներն իրենց կռիւներով որ շարունակելի են:

Ստացայ ձեր յուլիս 3 թւակիրը, որով ի տար էի մէջ աթոռ ունենալու համար թագրի մ'էս մատուցանելիք կը յայտնէիք: Հակառակ ամէն աշխատութեանց ձեր վերջին թագրին ալ իր նախորդներուն նման արդիւնք մը չկրցաւ ունենալ: Երազեկ աղբիւրներէ կ'իմանամ թէ, Ա.-ի իտարէի ժողովն մազպարթաւ է ուղղած կուսակալութեան այս իմաստով՝ «Հայոց Առաջն. Տեղապահը սէր քէշ, յանդուգն, չհամակերպող երիտասարդ վարդապետ մ'է և այս կողմերու մ'ուսամէլ է ներուռն չի կրնար լաւ ծառայել տէրութեան: Հետեւաբար Գ.-ի աս. ոց չի քահանան յարմարագոյնն է:

Ս ե պ տ. 22 ն ա մ ա կ է ն. — Այս շաբաթ ալ նամակ չստացանք ձեր ամենապատուութիւնէն կ'երեւի թէ տակաւին կը շարունակէ պատրիարքարանից «կարճառօտ արձակուրդը»: Արդ, արձակեա՛ Տէր:

Աստուծոյ սիրոյն արձակեցէք զինք այս պաշտօնէն, տասնեակ ամիսներէ ի վեր բազմիցս հրաժարական տուած, գրած և ողբերգած եմ: Ա.-ի մէջ ալ չեմ կրնար մնալ, չեմ կրնար հանդուրժել, ալ հարամ է ինձ Ա.-ն, նա մանաւանդ հտեւեալ գլխաւոր և կենսական պատճառներով: Տեղական կառավարութեանը բոլորովն աննպաստ վերաբերութեան համար, որով այնպիսի մոլեռանդ և կանխակալ սկզբունքով լարւած քաղաքականութեամբ մը կը վերաբերի հայ քրիստոնէութեան և անոր հոգեւոր պետին հետ, որ ամենէն պարզ և ամենէն տարրական ու աննշան խնդիրներու մէջ իսկ դժարութիւն և դժկամակութիւն ցոյց կուտայ, իհարկէն զանոնք կապելով՝ երեւակայական և ոչ-իրական իրատէն երու: Այնպէս որ արդէն մեծ ու կարեւոր ուէ ազգօգուտ բանի մը երբէք չեն հանդուրժեր և ներեր, ամենաշնչին խնդիրներն իսկ — զորոնք ուրիշ տեղեր անձնական տեսութեամբ կամ խնդրանքով մը կարելի էր լուծել ալ — Ա. Բ. Գ. թագրիւններով իսկ չեն բարեհաճեր լուծել ի հեծուկս: Ամենակարեւոր (թէ և բոսինքեան չնչի՛ն և անարժէք) խնդիրներէն բաւ է յիշել ի տար էի խնդիրը, որուն բոլոր եղանակաւորութիւնն և ապարդիւնութիւնը ծանօթ է ձեր սրբազնութեան... Ամէնէն անկարեւորներէն՝ եկեղեցական տան մը նորոգութեան դէմ եղած և ցուցած անհամեմատ ընդդիմութիւնը եւ կառավարութեան այս վերաբերումն և ուղղութիւնը կուզէ կամ կը ղեկավարէ անշուշտ թէ գաղտնի հրահանգները և մանաւանդ տեղւոյս իսլամ կարգացողները (չէրիս, նագիպ, սէյիտ, մօլլա, հաճի, սօֆի), հրահանգներն ու թեւադրութիւններն շատ աւելի յարգելի և գործադրելի են հոս քան ամէն հրամանահրահանգ և նոյնիսկ իրատէ:

Վիճակիս ժողովուրդին՝ բոլորովն ենթակայ եղած ստրկութեան, թշուաութեան, կարօտութեան և հարստահարութեան ու անապահովութեան (կեանքի, ինչքի և պատւի) համար, որոնց մինակ և անձարակ կը գտնիմ ինքզինքս, լքւած ըլլալով պատրիարքարանից անմիջական և ազգեցիկ միջնորդութեն և կառավարութեան բարեաջակամ տրամադրութենէն: Այնպէս որ խեղճ, տգէտ, թշուա և կարօտ ժողովուրդին չեմ կրնար հասնել միակողմէ, ոչ բարոյցապէս, քանի որ բարոյական միութարութիւնը կամ քաջալերութիւնը այնչափ տկար է այսօր, և ոչ նիւթ ապէս, որովհետեւ բոլորովն զուրկ եմ անիրաւ մամոնայէն, որով կարելի ըլլար հասնել բերազգի կարօտութեանց և ոչ ալ վարչական ա-

պէս, որովհետեւ կառավարութեան անպատասխան վերաբերութիւնը և աշխրհիկութեան հարստահարութիւնը բոլորովին կը ջլատէ և կը թեւատէ գիտ և ամէն բանի մէջ անճարակ և անյաջող կը կացուցանէ:

Ասկէ գրեթէ 15 տարի առաջ Ս.-ի եկեղեցւոյն համար տուն մը կը գնէի, եկեղեցւոյն դիմացը և վարժարանին ճիշդ կիցը և այն ատեն արական վարժարանին մօտիկը աղջկանց վարժարանի մը վերածելու մտադրութեամբ: Նոյն տարին հին շէնքը փլցնելով՝ կուգին նպատակաշարժար շէնքի մը վերածել զայն և ամէն ատաղձ կը պատրաստեն, բայց երբ գործի կըսկսին, իսլամ մոլեռանդ ամբոխը կ'արգիլէ և բոլոր ատաղձը աւարի կուտայ: Այդ կ'անցնի, կը մոռցւի գրեթէ:

195-ի աշնան կը մտածուի առաջնորդարանի վերածել, հազիւ հազ և կաշառով մաշառով կը յաջողին սկսել շինութեան դէպքէն գրեթէ ամիս մը առաջ: Երկար կի շէնքը հազիւ թէ կը վերջանայ և տանիքին ծեփը կը մնայ, անիծեալ դէպքին շփոթութիւնը կը փրթի: Ամբոխը կը յարձակի վրան, վերնայարկը կը փլցնէ, պատրաստ ատաղձը աւարի կուտայ: Յաջորդ տարին ձմրան, պէլէտի յեն կուգայ ամբոխին թերի թողածը կը լրացնէ, փլցնելով գրեթէ շէնքին մեծագոյն մասը, ըսելով թէ վտանգաւոր է:

Այս տարի մենք ուզեցինք նորոգել և վարձու տալ բաւական պատրաստութիւն ալ տեսնեք: Բայց թաղին նա Ս. հաճիներն ելան և միւթէսարիքին բողոքեցին թէ «չենք ընդունիր որ այդ տունը շինուի, Է. յգկիթին մօտ ըլլալուն պատճառաւ»: Եւ արգիլեցին նորոգութիւնը: Ի՞նչ կ'ըսէք ասոր, ի՞նչ ընենք...

Հոկտ. 12 նախակէն: — Ստացայ ձեր սեպտ. 20 նամակը, որով կ'աւետէիք թէ, վիճակիս մէջ տեղի ունեցած տուրքերու գանձման խտուրտեանց մասին մատուցած ձեր թաղորդին վրայ, արտ. գործ, նախարարութեան կողմէ կարեւորն գրած է Բաղէշի կուսակալութեան և կը յանձնարարէք ինձ հետամուտ լինել և արգիւնց վրայ տեղեկութիւն հաղորդել:

Արդէն գրեւծները չկրկնելու (անօգուտ տեղ մանաւանդ) և չափաւոր ոճ ու լեզու գործածելու և պատշաճից օրէնքն (իմա՛ որ թէ գործ տեսնելու, այլ ի տարէի մասը աւագութի ուսուցչը) յարգելու համար, աւելի բան մը չեմ գրել և սա չափը միայն կ'ըսեմ թէ, Թա՛հսիլաթը միևնոյն սկզբունքով և սխտեմով ու խստութեամբ և աւելի թափով շարունակեալ է և կը շարունակուի ար. Արնայէս որ միւթարներն չեն հիմա, որ անձի մը պարտքը կը ցուցնեն և անձամբ կը գանձեն, այլ թահսիլներէն օրը օրին պատրաստած պարտացուցակը կը տրուի և ոստիկաններն ծեծելով և աներեւակայելի խայտառակութիւններով խմբովին կը տանին ոստիկանատուն և կը գանձեն որչափ որ ուզեն, բիւր անարգանքով և հայհոյանքով, ծեծով և բանտարկելով: Միւթարները կը կենան հոգ իբր խրաւիրակ և իրենց ներկայութիւնը կ'արգարացնէ միայն զապիթաթի թահսիլաթը և վերջնոյն խստութիւնը:

Ստացայ ձեր Սեպտ. 10 թեւակի նամակն, որով կը յայտնէք թէ «խնդրոց կարգադրութեան համար եղած աշխատութեանց և դիմումներուն, երբ չհամապատասխանէր արդիւնքը, պատճառը պէտք է վերագրել պարագայից բերման» և կը յանձնարարէք չգրգռուիլ ու չվհատել իրաց դժուարին կացութեան առջև և չգաղա-

րել ջանք ու միջոց ի գործ դնելէ «գոնէ մեր կոչման ու խղճին հանդէպ մեղանշած չ'ըլլալու առաջադրութեամբ»:

Ներկայս գրելնուս պահուն, դեռ աչքիս առջև ունենալով ձեր հրաւեր-հրամանն «ո՞նք ու լեզուս չափաւորելու», չեմ ուզել շատ բան գրել, թէ և խնդիրը կը պահանջէր շատ ու շատ բաներ մը գրել: Եւ այսչափ կ'ըսեմ միայն՝ թէ խղճիս ու պաշտօնիս հանդէպ չմեղանջելու համար է միայն որ կը գրեմ այդ քիչ մը բաց, համարձակ և անկեղծ տողերը: Բայց եկու տես որ ժողովորդեան մը գոյութիւնն ապահովելու և իրաւունքները պաշտպանելու համար, բաւական չէ միայն կը կարծեմ խիղճը գոհացնել... Այսչափ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պօլսի մեր թղթակցէն ստացած ենք հետեւեալ երկու հեռագիրներու պատճենները, զոր ուղարկած են ձիգրէի¹⁾ քրիստոնեայ և հրէայ հասարակութեանց հոգեւոր պետերը, Պօլիս, կայսերական պալատ և իրենց պատրիարքարաններուն և խախամին, քաղաքին և շրջակայ քիւղերու քրիստոնեայ և հրէայ բնակիչներուն կրած հարստահարութիւններուն պատճառով:

Լ

Կայսերական պալատան քարտուղարութեան միջոցաւ
յՈսոս Կայսերական Գաղտնիք

Պատճենները՝ Մեծ Եւարքոսին, Ներքին Գործոց Նախարարութեան, Ասորոց Պատրիարքարանին, Հայոց Պատրիարքարանին, Գաթուիկաց Պատրիարքարանին, շիւքից Խախամարանին

Քանի մը տարիներէ ի վեր մեր շրջականները պաշարման վիճակի մը վերածելով խաղաղ և հնազանդ ազգաբնակչութեան գլխուն անխող և անվորով կերպով ամէն տեսակ զոհանքներ և հարստահարութիւններ ի գործ դնող քաջարներու պետ Մուսթաֆա փաջայի և իր փեսաները Թահիրի և Ֆաթիմա հի և անոնց զաւակներու վերաբերմամբ ցարժ ունէ տնօրինութիւն մը չ'ըլլալու հետեւանք, մեր գաւառակը (գասապա) յաճախ անոնց կեղեքումներուն և շրջակայ քիւղերն ալ թալանի և աւարառութեան թատր մ'իղած և այդ շնորհիւ քիւղերուն մեծ մասը արդէն աւերակ դարձած էին:

Երէկ ալ յիշեալ Մուսթաֆա փաջայի հրամանին տակ գտնուող և Մարթինի հրացաններով զինւած 600 Համիդիէ զօրքեր ձիգրէյէ 6 ժամ հեռաւորութիւն ունեցող Հազէկ և Պապիկ քիւղերու քրիստոնեայ ազգաբնակչութեանց վրայ յարձակելով անոնցմէ 30-40 հատ սպաննելէ և վիրաւոր ձգելէ հտը, սպաննացան գասապայիս կեդրոնի վրայ, որով այս պահուն գաւառակիս մէջ գտնուող ամբողջ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը կենքով և ստացւածքներով անապահով գրութեան մը մատնուած է:

Ուստի անկախ և անվախ բռնակալութիւններ կատա-

1) Ճիշդ է կը գտնուի Տիգրանակերտի կուսակալութեան հարաւ արեւելեան կողմը, Ճուտի լեռան ստորոտը (որուն վրայ, ըստ քրդաց, Նոյի տապանը իջած է) Տիգրիսի աջ ափին վրայ: Գալմազամանիստ քաղաք: Ունի մօտ 10,000 բնակիչ, 4,000-ի չափ լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ հայեր, 4,500 թուրք եւ քիւրդ, մասցածը կաթոլիկ քաղաքացիներ եւ սիրիացի յակոբիւններ: Ամբողջ գաւառակը ունի 35,000 բնակիչ, 35,000 միւսուլման, միւսամանութիւնը քիւրդ ըլլալով, 10,000 քրիստոնեայ:

րող յիշեալ փաշային, նոյնպէս Թահիր և Փաթթաճաղաներուն և կառավարութեան ծանօթ՝ անոնց տխրահաշակ արքանեակներուն՝ մեր կողմէն գոյութիւնն զերջնելու եթէ բարեհաճ հրամաններ չպիտի շնորհին, նորին կայսերական հպատակասիրութեան անհուն և բարձր գթառատութենէն ամենախոնարհաբար և մեր վերջին շունչով կ'աղերսենք որ ամենաողորմածաբար բարեհաճի արտօնել առաքումը բաւականաչափ զինւորական պարութեան, որ պաշտպանէ այս երկրէն գաղթելու ստիպւած մեր ամբողջ ժողովուրդը, և այդ կիրպով ազատել մեզ ներկայ գիւղութեան շղթաներէն: Թէ այս և թէ ամէն պարագաներու մէջ կամք և կարողութիւն մեր Ամենաողորմած և օգոստափառ տիրոջ Սուլթանին կը պատկանի:

8 դեկտ. 1901

(Ստորագրութիւններ)

Ասորոց Առաջնորդ Գիւղանորդ	Ճիզրէի Քաղղ. Առաջնորդ
Կաթող. Մարտի	Մար Ծագուպ
Հայոց Առաջնորդ Գիւղանորդ	Կաթողիկոց Առաջ. Գիւղանորդ
Տէր Թակոբ	Դաս Քառն
Հրէից Ռաբբին	Քաղաքի երեւելիներէն
Շամուէլ	Սարգիս, Աղտուլլահ, Աղտիւլահէտ, Պօլուս

II

4. Պօլսի հայոց, ասորոց և կաթողիկոց պատրիարքներուն (Պատասխանին 40 քառու լմարւած)

Չորրորդ զօրաբանակի հրամանատարին կողմէն ցոյց տրւած քաջալերութեան վրայ՝ Միրանը Մուսթաֆա փաշային և իր չարագործ արքանեակներուն ի գործ դրած բռնակալութիւնները և մեր ժողովուրդէն 80 հոգիներու չարաչար սպանելը 9 և 20 դեկտ. թիւ հեռագիրներով յոտս կայս. գահոյից և բարձրագոյն իշխանութեանց և բոլոր բրիտանեաները բնաջնջելու իր նպատակը դեռ չգործադրած՝ անմիջական միջոցներուն ձեռք առնելը աղերսած էինք. բայց ցարդ ուէ պատասխան մը չստանալուն վերջին ծայր յուսահատւած և սարսափելի սպառնալիքներու տակ կեանքերին վտանգւած մեր ժողովուրդին պաշտպանութեան վերաբերեալ կայսերական շուտընդօրին հրամաններ ղրկել տալու եթէ ուշ չգարձնէք, մեր ժողովուրդին գաղթելու պատրաստութիւնը այժմէն իսկ հաղորդելով, Ձեր հեռագիր-պատասխանին հեռագրատան մէջ կըսպասենք:

30 դեկտ. 1901

Ասորոց Առաջնորդ	Քաղղէացոց Առաջնորդ
Մարթան Պէշման	Մարթան Ծագուպ
Կաթող. ասորոց Առաջ. Գիւղանորդ	Հայոց Առաջ. Գիւղանորդ
Դաս Քառն	Տէր Թակոբ

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՏԱՄՆՆԵՐՈՐԴ ՆԱՄՈՎ

Պետերբուրգ, 16 ապրիլ 1902

Սեպարատիզմի յաջորդեց սօցիալիզմը:
Հաստատուեց «կնուսի» թագաւորութիւնը Ֆինլանդիա, Լեհաստան, Կովկաս և միապետութիւնը ծափ զարկելով, հանգստութեան ժպիտը երեսին՝ բազականչեց՝ «Հանգիստ է Ռուսաստանը, որովհետեւ այլեւ չկայ սեպարատիս,

տական (անջատական) շարժում, չկայ ազգերի խնդիր»:
Տասն տարի է արդէն հնչում է այդ ցնծութեան ծափը. այնքան բերկրալի Պետերբուրգի պալատներում և այնքան ողբերգական Հելսինգֆօրս, Վարշաւա ու Թիֆլիս, ուր բռնապետութեան գործակալները քաղաքական խրախճանքներ էին կազմում ի հաշիւ ստրկացող ազգերի...

Բայց ահա պայթեց նոր փոթորիկ, քաղաքական մի մրրիկ, որոտ, որի սարսեցնող գոչը պետութեան ծայրերից չի լսում այլեւս, այլ կենտրոններից, այն հսկայական քաղաքներում, ուր երբէք չի լսել յսէպարատիստ՝ ազգերի թոյլ բողբոջը, բուն ռուսական կենտրոններում, որոնք այսքան դարեր միապետութեան պատւար հանգիստացան:
Փչում է 89 և 48 թւականների հովը, Հեռուից է գալիս մրրիկը, բայց այս լայնատարած պետութեան մէջ նա այլեւս չի մարում, չի եւթարկում խաղաղացման կամ անհետացման, այլ տեղ ա կ ա ն հոգիների հանգեպ՝ կերպարանափոխւած, նոր ուժ, նոր ցնցումն առած, նա սպառնում է դառնալ անդիմադրելի ուրաքան որ կարող է քարուքանդ անել այն, ինչ դեռ երէկ համարւում էր անձեռնմխելի, անշարժ, անսասան...

Երիտասարդութեան չէ «մեղքը» և ոչ արտասահմանից ներմուծող «վտանգաւոր» գաղափարների ծնունդ է նա, ինչպէս փաստաբանում են Չմեռային պալատի արտաբնական ղեկավարները: Այդ անիծւած, կոյր, անմիտ քաղաքականութիւնը, որ այնքան աւարիներից ի վեր փորձեց համայն Ռուսաստանը դարձնել մի լուսկեաց բանտ, որ գահը, եկեղեցին, դպրոցը միապետակով միայն — դարձնել մի հսկայական ապուշ այն, ինչ կոչւում է ժողովուրդ, որ ոչ մի միջոց չէնայեց այդ ժողովուրդը շինելու մի հիւսիսից երակ այն անկուշտ տղուկի համար, որ կրում է «կառավարութիւն» անունը. այդ անմիտ, կոյր, վայրենի քաղաքականութիւնն է, ասում ենք, որ առաջ բերեց արեան, արտասուքի և տանջանքի յեղափոխութիւնը այնտեղ, ուր ամէն ինչ կարող էր կատարել խաղաղ, խեղացի էվոլյուսիօնի միջոցով, մի երկրում, ուր, գոնէ ըստ երեւոյթին, սուրին յաջորդել է գրիչը, արիւնին՝ գիտութիւնը, կնուսին՝ համալսարանը:

Երեկւայ վայրենիների, մարդակերների հայրենիքը՝ Աֆրիկան՝ ունի իր ինքնավար երկիրները, իր հանրապետութիւնը, իսկ Եւրոպային կպած, նրա կողմ կազմող Ռուսաստանը՝ հասուն չի համարւում մի պարզ խօսելու ազատութեան, անմեղ պարլամենտի:

Աջքից կորած Աւստրալիայում, հազիւ կէս դարու պատմութիւն ունեցող ժողովուրդը ունի խօսքի, մամուլի, ժողովի ազատութիւն, իսկ ֆիններ, լեհեր, հայեր, որոնք դարեւոր քաղաքակրթութեան օջախներ եղան, ինչպէս և յաճախ՝ նրա անձնէր պաշտպաններ խեղդող բռնապետութեան դէմ, անընդունակ և անկարող են դատուի՝ քաղաքացիական տարրական իրաւունքի, սեփական զրպրոցի, տեղական ինքնավարութեան, ազգայնական ինքնուրոյնութեան: Բազմատանջ ռուս ժողովուրդը, որ իր որդոց սուրբ արիւնով խնց մահադական բռնապետի ձանկերից Բաղկանը, ուր այժմ, քաղաքականապէս մանուկ ազգերը վայելում են սահմանադրութեան այնքան պարզ բարիքները, ինքը — ուրիշներին այդ բարիքները տուր ինչպետող ռուս ժողովուրդը, ասում ենք, մնում է կարօտ այդ նոյն բարիքներին, ճնշւած մի բռնապետութեան տակ, որ սկսել է համարձակ մրցել ասիական ամենախաւար

բռնագետութեան հետ, հասած մի կատաղութեան, որ իրօք օրհասական վախճանի նշան պիտի համարուի...

Եւ օրէցօր աւելի վատ, աւելի ծանր:

Երկու տարի առաջ ռուս ռուսանողութիւնը մեծ պահանջներ, այլ լոկ ակադեմիական իրաւունք, որ աւելի զուտ ռուսանողական բնոյթ ունեցող խնդիր էր, քան քաղաքական: Կառավարութիւնը ոչ միայն մերժեց, այլև պատժեց: Պատիժը ստեղծեց նոր դժգոհութիւն: Դժգոհութեան պատասխանը եղաւ հալածանք ծառայութիւն զօրքի մէջ, նոյնիսկ կնուտ, բանտ և աքսոր:

Անարգար, ծայրայեղ խստութեանը՝ երիտասարդ Ռուսաստանը պատասխանեց ծայրահեղ աձ իրութեամբ, և երկար տարիների ընթացքում կուտակեալ, անգործ մնացած ջահել ուժերը հրապարակ նետեցին: Եւ այն օրից սկսեց յամառ կռիւը, ոչ յանուն համալսարանական աննշան բարեփոխութեան, այլ յանուն աւելի լայն նպատակի, քաղաքական իրաւունքների:

Մինիստր Վաննովսկու խաբէրայութիւնը, հրապարակական և առանց ամօթի նշոյլի, եղաւ ազդանշան նոր խառնակութիւնների: Ռուսանողական ժողովները, սկսեալ Պետերբուրգում, բարձրակոչ բողոք յայտնեցին Վաննովսկուն, որ տարբերութիւն էր դնում ռուսանողի և իր նախկին ծառաների՝ զինուորների մէջ, Կիւլում նոյնիսկ հրապարակով այրեցին «ժամանակաւոր կանոնադրութիւնը» և համարեայ բոլոր համալսարանական ժողովներում վճռեց՝ իրեն պատասխան կառավարչական ձգձգումների, բանտարկութիւնների և աքսորների՝ դիմել ռուս անդակաւն գործադուլի, գասախօսութիւններին չյաճախել, որ և ստիպեց կառավարութեանը իր անձարութիւնը վարագործելու համար՝ կարգադրել փակելու բարձրագոյն դպրոցների մեծ մասը:

Հարժման աղիքները, բորբոքեալ անտեսանելի, բայց զօրեղ փոթորիկից, տարածեցին հեռու ու հեռու: Հասարակութեան մի քանի խաւեր, հարստահարեալ բանտարկները յատկապէս, արձագանք տւին ռուսանողական կոչերին: Դեռ 1901-ին Կիւլում, Մոսկվայում և Խարկովում ծածանեց կարմիր դրօշակը: Բանտարկան գասակարգը կազմակերպեալ իբրեւ երկու կուսակցութիւն՝ սօցիալ-դեմոկրատներ և սօցիալիստ-յեղափոխականներ, միացան ռուսանողական շարժման: Արդիւնաբերական կենտրոններում, ինչպէս Պետերբուրգ, Մոսկւա, Վլադիմիր, Տուլա, Բրիանսկ, Բանտները կազմակերպեցին նոր ուժով: Խարկովում 1901-ի դեկտեմբերին տեղի ունեցաւ ռուսանողական-բանտարկան ցոյց քաղաքի գլխաւոր փողոցներում և միացած ուժով մի քանի ժամ շարունակ դէմ՝ տեղի կոզակների բանակին, որ այնքան կատաղութեամբ դուրս էր եկել յեղափոխութեան դէմ: Կիւլում այս տարւայ փետրվարի 2 և 3-ին, բանտները միացած ռուսանողների կազմակերպութեան, կարմիր դրօշակը պարզած, փխտարի ցոյց արեցին երկու օր շարունակ: Վարչական խստութիւնները՝ բանտը, աքսորը, ծեծը, անթիւ խուզարկութիւնները, վերջապէս սպանութիւնները կրկնապատկեցին զրգուշատրամադրութիւնը, և իբրեւ արձագանք՝ բանտարկան ցոյցեր տեղի ունեցան մինչև այժմ՝ խաղաղ այնպիսի քաղաքներում, ինչպէս Սարատով, Տամբով, Թիֆլիս, Բաթում, Բաքու...

Մոսկվայի համալսարանում Փետրուարի 9-ին կայացած ահապին ժողովը, բաղկացած 518 հոգուց, կայացրեց մի որոշում, որ կարող է համարուել ամփոփումն

այժմեան պահանջների և արտայայտութիւն երիտասարդութեան քաղաքական տենչերի:

Ահա այդ որոշումը:

«Մենք, Մոսկւայի զանազան բարձրագոյն դպրոցների ռուսանողներս, թւով 518 հոգի, ժողովեալ 9 փետրուարի 1902, նկատելով՝ որ ակադեմիական նոր լէժիսլի աննորմալ դրութիւնը հետեւանք է Ռուսաստանում սահմանադրական տեւէ իրաւունքի բացակայութեան, մի անգամ ընդ միշտ հրաժարում ենք համալսարանական հողի վրայ կուլուր յնորքից: Մեր երկրի հասարակական կիսնքը կը կայողանայ մանեղ բնական զարգացման ճանապարհը միմիայն քաղաքական և սօցիալական անդադրէժի մի արմատական փոփոխումից յետոյ, երբ ապահովեալ կը լինեն ամէն մի անհատի քաղաքացիական իրաւունքները: Մենք համոզուած ենք, որ առանց դրան ռուսական կիսնքը մի քաղ անգամ չի անի դէպի առաջադիմութիւն և որ երկրի ամենալաւ ուժերը պարբերաբար կը խլեն հասարակութիւնից: Մենք պահանջում ենք.

- 1) Անհատի անձեռնմխելիութիւն (habeas corpus).
- 2) Մամուլի ազատութիւն.
- 3) Ողջի ազատութիւն.
- 4) Համախմբման և ընկերութիւնների ազատութիւն.
- 5) Պաշտօնակալի ուղղակի պատասխանատուութիւն.
- 6) Կրթութիւնը մատչելի ամէնքին.
- 7) Կանանց ընդունելութիւն համալսարաններում.
- 8) Բոլոր ազգերի հաւաստութիւն օրէնքի առաջ: Բանտների հետ միացած՝ մենք ահաւանջու՜ ենք.
- 9) Ութ ժամուայ աշխատանքի օր.
- 10) Գործադուլի իրաւունք:

Անկարող լինելով ենթադրել, որ այժմեան կառավարութիւնը ընդունակ լինի հասարակական լէժիսլի վերակազմելու մենք դիմում ենք մոտեցող եւ քաղաքական հասունութեան հասած ամբողջ Ռուսաստանին. մենք ուզում ենք ապացուցանել նրան, որ ժամանակը հասել է Սահմանադրական ժողով ստեղծելու»:

Եւ յանուն այդ գեղեցիկ ապագայի, երազ-օրերի, հերոսական և յուսահատ փորձեր են կատարուում: Մինիստր Բօգոլէպովի սպանութիւնը, սպանութեան փորձ Պօքե-գօնօցեվի դէմ, փորձ՝ կրկնեալ երեք անգամ՝ Տրէպովի դէմ, փորձ Վարչապետի նահանգապետի դէմ, մինիստր Սիպեագինի սպանութիւնը, որ կատարուեց այս օրերս և որի սարսափը սաւառնել է ամբողջ Պետերբուրգի վրայ, մի քանի փորձեր նոյնիսկ պալատի մէջ, 69 բարձր պաշտօնեաների սպանութեան ծրագիրը, գտնեալ նորագոյն խուզարկութիւնների ժամանակ, գիւղացիների շարժումը հարաւային Ռուսաստանում—և այս բոլորը համարեա մի տարւայ ընթացքում, զօրեղագոյն ապացոյց է, թէ ինչ լարման է հասել քաղաքական գրգռմունքը և ինչ հասարակութեան՝ մօտիկ ապագայի լաւագոյն յոյսը:

Ուշագրաւ են այս նոր շարժման յատկանիշները: Երբեմն ռուս ամբողջ և նրա հետ բանտը, համոզեալ միապետութեան անասանութեան մէջ, համոզեալ, որ բռնագետութիւնը աստեածային նախորդումն է, ինքն էր իր ձեռքով պատժում ըմբոստ ռուսանողներին, յեղափոխութեան նախակարգայիններին: Եւ որքան տխուր էին այդ փաստերը... Այժմ, ինչպէս տեսնում էք, ցարի անսահման իշխանութեան վաղափարը, դրեալ ռուս ժողովրդի կրծքի վրայ, խախտեալ է: Նա այլևս ոչ պատմական օրէնք է, ինչպէս հաւատացնում էին միապետականները, և ոչ Ռուսաստանի պատմական պայմաններից բղնող միստիքական վարդապետութիւն, որպէս քարոզում են ժողովրդական ինքնադատականութեան զարթոնից գողացող ռուս մտածողները, այլ սոսկ վուլգար բռնագետութիւն, որ չունի ոչ մի հիմք և ոչ մի ապագայ, և որի

օրերը հաշւած են: խախտւած է ժողովրդի հաւատը, խախտւած է և բռնապետութեան հիմքը:

Դա է արդի շարժման բնորոշ մի կողմը: Բայց կայ և մի այլ բնորոշ յատկանիշ. դա նրա միջազգային բնաւորութիւնն է: Երբեմն Ռուսաստանի քաղաքական շարժումներին, յեղափոխական ձեռնարկներին, ինչպէս և սօցիալական ցոյցերին մասնակցում էր միայն ռուսը և ռուսական կենտրոնը: Այժմ ռուսին միանում են և ուրիշ ազգեր, ռուսական կենտրոնին՝ ծայրերը: Երբեմն ռուսնողական շարժումներին իրան հեռու էր պահում լինելը, հայը, վրացին, ֆիննը, հրէան, մահադականը, կամ խաբաւած չէր զոք ու թիւան յոյսով, կամ դժբաղձ ներքին, ազգայնական գործերով: Իսկ այժմ՝ միացած ընդհանուր ձգտումներով, կապւած այն համոզմամբ, որ պէտք է ցնցել բռնապետութեան պատանդները, որը խտրութիւն չի դնում տեղի և ազգերի մէջ, շարժական զգացումներն իրար զգացմունքներով և ցաւերի անհունութեամբ, ռուսնող երիտասարդութիւնը կուռում է ձեռք ձեռքի տւած, կողք-կողքի, միեւնոյն շարքերում: . . . Եւ ազգերի մէջ փոխադարձ ատելութիւն սերմանող կառավարութիւնը, իր աչքով տեսաւ, սարսափած աչքով, որ ռուսի հետ միասին, իր մէջքը կողակի կնուտին դէմ է դնում և՛ լեհը, կուրծքը զինուորի հրացանին և՛ հրէան, որ արքայի ու բանտի մէջ միմեանց ցաւեր ամոքում են ֆինլանդիայի, Լեհաստանի և Կովկասի զաւակները, միասին, եղբայրաբար: . .

Նոր յաղթանակ է սա և նոր գաղափար: Այդ նոր գաղափարն է, որ միեւնոյն բողոքի թնդիւնն է բարձրացնում այս երկրի միմեանցից այնքան հեռու, այնքան տարբեր անկիւններում: . . . Կուր ֆինլանդիայում, կուր Լեհաստանում, կուր Մալթոսների հայրենիքում, կուր Կուրի ափերին, ուր միեւնոյն ցոյցի մէջ հայը ներկայանում է իբրեւ զրօշակի, վրացին իբրեւ զաշոյնակի, ռուսը իբրեւ կուռղ-գաղափարակիր:

Ումն է մեղքը:

Բռնապետութեան ընդհանուր, հարբած սեպարատիզմը, ոչնչացնելու խելագար տենչով, արմատախիլ արեց, ոչնչացրեց այն բոլորը, ինչ կազմում էր Ռուսաստանը բաղկացնող ազգերի ներքին, տեղական, առանձնայատուկ զգացումը, ոգևորութիւնը, գործը: Ֆիննից խելցին սահմանադրութիւնը, որով նա այնքան երջանիկ էր: Լեհիւն ասացին՝ «25ամարձակես լեհ մնալ մոռացիր քո անցեալը, և ճանաչիր միայն մի ապագայ, ռուսական ապագայ»: Հային՝ դարերի ընթացքում յօշոտւած այդ աշխատաւոր ժողովուրդին, որ փորձեց բողոքի ձայն բարձրացնել օսմանեան սահմաններում արիւնաքամ եղբայրների օգտին, խեղդամահ արին. խելցին նրա գիրը, դպրոցը, հողը: Իսկ վրացին, նա, որ սեփական կամքով իր հայրենիքը ռուսաց գահի ոտքերի տակ դրեց, և որ իր աղօթքն անգամ ռուս լեզուով է մըմնջում, այդ նոյն վրացին յայտարարեց սեպարատիստ, վտանգաւոր, արժանի հալածանքի: Հապա հրէան, բաղ-մատանջ, հալածական, արհամարած այդ ազգը: . . . Քարերն անգամ բողոքեցին:

Եւ ահա միացած յուսահատ զգոհութեան ընդհանուր կապերով, անկարող ծառայելու սեփական ցաւերին, զուրկ միջոցներից ստեղծելու տեղական ունեւիճակի, գործ, հասարակական զբաղմունք, իրաւազուրկ տալու իր ժողովուրդին այն, ինչ ամէն մի ինտելիգենտի

պարտքն է, վերաւորւած՝ մարդկային տարրական իրաւունքների համար, անկարող բողոքելու, անկարող ուսուցանելու, գրելու, խօսելու մայրենի լեզուով, մայրենի ցաւերի համար, — դրանք բոլորը, իրերի անխուսափելի լօգիկով, մոռացած փոխադարձ հին թշնամութիւնները՝ կանգնեցին նոյն շարքերի մէջ, և ռուս ուրի տւած, երեսու երես ընդհանուր թշնամու դէմ: . .

Այս միացումը կուռղն երի ուժն է, և թըշնամու սարսափը: Ինքը թշնամին պատրաստեց այդ. նա՛ յանուն «սեպարատիզմի» կործանեց տեղական, ազգայնական կեանքի լուսաւոր, կուլտուրական ձեռնարկները, և գուցէ անգիտակցաբար, բայց փայլուն միամտութեամբ պատրաստեց միացած ընդհանուր կուրը, — սօցիալիզմը:

Եւ թող վայելի պտուղը: . .

Կուր սկսւած է:

Երկու բանականը կանգնած են միմեանց հանդէպ. մի կողմից՝ գահը, զօրքը, կղերը. միւս կողմից՝ մտքի աշխատաւորը՝ երիտասարդ Ռուսաստանը և նրա յետեւից ձեռքի աշխատաւորը՝ բանւոր Ռուսաստանը: Առաջինը՝ կազմ, մեծաւոժ, անսիրտ և արեան ագահ. երկրորդը՝ դեռ անկազմ, թույլ, սոսկացող արիւնից, բայց լարւած վառվռուն յոյսերով, ապագայ յաղթանակի գրաւիչ հեռանկարով: Առաջինի շարքերում՝ գերեզմանին մօտեցող հայրը, երկրորդի մէջ՝ կեանքի դիմող որդին: Առաջինը՝ յանուն անցեալի, երկրորդը՝ յանուն ապագայի: Վաղը անցեալին չի պատկանում, վաղւայ տէրը ապագան է: Այդ բնական օրէնքը, տիեզերական այդ յաւիտենական ճշմարտութիւնն է, որ այնքան սիրտ և այնպիսի ուժ է տալիս կուռղ-երիտասարդ Ռուսաստանին հանդէպ մի բռնապետութեան, որի ուժը ցայժմ ահարկու է և կնուտը՝ մահաբեր:

Ի. ԱԿՆՈՒՆԻ

ԵՐՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Եւրոպայի հայ ուսանողներու հինգերորդ համագումարը այս տարի տեղի ունեցաւ մարտ 31-ին Ժընէվ, *Hôtel des Alpes*-ի ընդարձակ սրահին մէջ, ինսուռնի չափ պատգամաւորներու, անդամներու ներկայութեամբ, որոնք եկած էին Եւրոպայի համալսարանական գլխաւոր քաղաքներէն, Պերլինէն, Փարիզէն, Մօնթէլիէն, Պրիւքսէլէն, Լիէժէն, Միւնիխէն, Տարմաշտադէն, Միտլայդայէն, Քարլսրուհէն, Լայպցիգէն, Հայտէլբերկէն, Հալէէն, Թիւրպինկէն, Գեթինգէն, Լօզանէն, Ժընէվէն:

Հայկական եռագոյն դրօշակը, կարմիր, ձերմակ և կանաչ կը ծածանէր պանդոկին ճակատը: Մէջտեղը, ձերմակ գօտին վրայ, լայնքէն երկու հորիզոնական սև շերտեր, իբր սուգի նշան, կը կրէին վեց աստղեր, խորհրդանիշ՝ այն վեց մարտիրոս վիլայէթներուն, ուր ազատութեան համար ահաւոր և անուսահատ պատերազմը կը շարունակէր և ուր Պերլինի դաշնագրով սուլթանը կը խոստանար «անհրաժեշտ» բարենորոգումներ մտցնել:

Սրահը դալարներով, կանաչ ճիւղերով պատկերներով և նշանաւոր հայ դէմքերու կենդանագիրներով վայելչօրէն զարդարւած էր: Մէկ կողմը կը տեսնէիր հայկական վերածննդական ոահպիրանները՝ Ալիշան, Արտվեան,

Պատկանեան, Արծրունի, Բաֆֆի. միւս կողմը նոր ու գինւորեալ Հայաստանի հերոսական դէմքերն ու սուերները՝ Սերոբ, Պետո, Բաբէն Սիւնի և ուրիշներ, մէջտեղը խորհրդանկար մը՝ «քաջամարտիկ Հայաստանը» ներկայացնող, ներշնչած «Մեր հայրենիքի» «Ահա եղբայր քեզ մի դրօշ»-էն:

Մամուլի, համալսարանական և ուրիշ ընկերութիւններու ներկայացուցիչները միայն իրաւունք ունէին բացման ներկայ ըլլալու:

Երեկոյեան ժամը 9-ին ժողովը բացեցաւ, երբ ամբողջ սրահը լիքն էր. մակեդոնացի խումբ մը ուսանողներ և մամուլի ու ընկերութիւններու ներկայացուցիչները բեմին քով առանձին տեղ գրաւած էին:

Հայ ուսանողուհիներու և ուսանողներու խմբերգ մը, երգեց «Մեր հայրենիքը», զոր ամբողջ սրահը ծափահարեց: Յետոյ պ. Խ. Մալումեան, Կ. Յանձնաժողովի նախագահը, հայերէն լիզով բարի գալուստ մաղթելով բոլոր ընկերներուն, խօսեցաւ պարագային յարմար ճառ մը: «Նախ, ըսաւ, սրբազան պարտականութիւն մը ունինք կատարելիք: Անցնող տարին հայ ազգը երկու ցաւազին կորուստ ունեցաւ. — Արիւն, որ 50 տարի Հայաստանի վերածնութեան երգը երգեց, և Սէրէմճեան ու Թորոսեան, որոնք Էտիքէի մէջ երկու մակեդոնացի ընկերներու հետ կախաղան հլան, իբրև գաղափարի մարմնացնողներ»:

Ժողովը այդ հայրենասէրներու անմոռաց յիշատակը յարգելու համար, ոտքի կանգնեցաւ:

«Կէս դար է, շարունակեց պ. ճառասօսը, որ հայ երիտասարդութիւնը եւրօպական համալսարանները կը յաճախէ: Առաջին ֆազին՝ նա նւիրած էր խաղաղիկ աշխատութեան և համալսարանական կեանքէն դուրս ոչինչ կը տեսներ. երկրորդ՝ այն է ներկայ շրջանին մէջ, հայ ուսանողին աշխարհահայեցողութեան մէջ նկատելի է մեծ փոփոխութիւն. — դա իր հայրենիքի ազատութեան գաղափարով ոգևորումն է: Եւ մի քանի տարի է հանդիսատես ենք, թէ ինչպէս հայ երիտասարդները, իբրև արձագանք հայկական շարժման և կուրի, բողոքի ձայն կը բարձրացնեն և ոմանք ալ օգնութեան կը փութան Թրքահայաստան, իրենց ապստամբ եղբայրներուն աջակցելու»:

Պ. նախագահը իր ճառը վերջացուց հրաւիրելով հայ ուսանողները սեղմել իրենց շարքերը, եւրօպայի առջև դնել հայ ժողովրդի մարտիրոսաբանութիւնը, անոր ընդվզումի ու պայքարի պատմութիւնը, քանի այս երկրի մէջն են:

Պ. Մ. Յովհաննիսեան ֆրանսերէն լեզուով բարոյիկ մաղթեց օտար ներկայացուցիչներուն և ներքողելով Զւիցերիոյ ու Ժընէվ քաղաքին հիւրասիրութիւնը, ըսաւ. «Իրենց հայրենիքին մէջ կաշկանդուած ու հալածական հայ ուսանողները տեսակ մը խորհրդարան կազմեցին ազատ եւրօպայի մէջ, ամէն տարի, այժմէութիւն ունեցող խնդիրներու վրայ վիճաբանելու համար: Ներկայիս մէջ ամենակարևոր խնդիրը՝ պրօպագանդն է Թրքահայաստանի օգտին, որ պաշտպանողներուն ձեռքը ինկած և տէրութիւններէն լքուած է, հակառակ հանդիսաւոր խոստումներուն:

«Մնալով օրինական գործունէութեան հողին վրայ, հայ ուսանողները չեն կրնար չարտայայտել իրենց բուն համակրութիւնը ան քաջներուն, որոնք այսօր Սասունի լեռներուն, Վաչագուրականի հովիտներուն մէջ կը կուրին

Մեծ Մարդասպանի կառավարութեան դէմ, միաժամանակ համերաշխելով միևնոյն բռնապետութեան զոհ ուրիշ ազգութիւններու հետ»:

Ատենախօսը մասնաւորապէս ողջունեց մակեդոնացի ուսանողները, որոնք «եկած էին անգամ մը ևս շեշտելու հայ-մակեդոնական եղբայրութիւնը, որ, շատ չ'ընել, երեան եկաւ Էտիքէի կուրի մէջ և կախաղաններուն վրայ»: Ապա դիմելով ուրիշ օտարազգի ուսանողներուն՝ «Բռնակալութեան խարազանը միջազգային է, վերջացուց ճառասօսը, դահիճներուն մէջ համերաշխութիւն կայ, պէտք է որ զոհերուն մէջ ևս համերաշխութիւն ըլլայ»:

Տիկին Իլզէ Քրապան, գերման գրագիտուհին և աշխատակից «Տօյչէ Ռունտշաու» թերթին, խորապէս յուզուած ճառ մը խօսեցաւ, յայտնելով իր անկեղծ հիացմունքը երիտասարդ Հայաստանին և իր խորին ցատուը գերման կառավարութեան, որ մեղսակից կը հանդիսանայ մարդասպան սուլթանին: Ճառասօսը բացատրեց ծածանող հայ դրօշակի իմաստը:

Յետոյ՝ Լուի Վարէն, Ժընէվի համալսարանին հասարակական գիտութիւններու բրօֆէսօրը փոքրիկ և ազդու ճառի մը մէջ իր համակրութեան հաւաստիքը յայտնելով հայ երիտասարդութեան, որուն մէկ մասը իր աշակերտներն են, գովեց անոնց եռանդը և աշխատասիրութիւնը: Խօսելով հայկական հարցի մասին, ի վեր հանեց ցաւազին հակասութիւնը, որ կայ հայոց դատին արդարութեան և անոր օգնութեան հասնելու տիեզերական անկարողութեան միջև:

Պ Ս. Բատէվ, «Մակեդոնական Շարժում» ֆրանսերէն կիսամսթերթի խմբագիրը խօսելով խումբ մը մակեդոնացիներու կողմէն, յուզած շեշտով մը ծանրացաւ այն համերաշխ կապերուն վրայ, որոնք կը միացնեն մակեդոնացիները «Դրօշակի» հայ յեղափոխական կուսակցութեան հետ, ջատագովեց գործնական պրօպագանտը և պնդեց միահամուռ և աւելի ու աւելի լայն գործունէութեան պէտքին վրայ հայերուն ու մակեդոնացիներուն միջև, որոնք միևնոյն թշնամին ունին իրենց դէմ: Վերջացուց իր ներքողալից ճառը հայ հերոսներուն և հայ ժողովրդին աննկունութեան համար, «կեցցէ ազատ Հայաստան» աղաղակով:

Այս ճառասօսութիւններէն յետոյ, նախագահը կարգաց համագումարին ուղղած հետեւեալ նամակներն ու հեռագիրները:

1) Շատ համակրալից նամակ մը պետական խորհրդի անդամ Ժօրժ Ֆաֆօնէն, որ ցաւ կը յայտնէր հայ երիտասարդներու ժողովին ներկայ չ'կրնալ ըլլալուն, հրաւիրած ըլլալով Պէրն, Դաշնակցային խորհրդին:

2) Զերմ համակրութեան հեռագիրներ յղած էին «Պրօ Արմէնիայի» խմբագրապետը և Մարսիլիոյ ընկերվարական ուսանողները:

3) Պ. Կօնտանսօն (Քրիստոնեաները և միւսիւմանները) անուն հեղինակաւոր աշխատութեան հայասէր հեղինակը) անկեղծ համակրութիւնով լի նամակ մը ուղարկած էր Հայաստանի և հայկական դատին համար:

4) Լօզանի մակեդոնական ուսանողներու և Զւիցերիոյ, Իտալիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ, Ռուսաստանի և Պուլհարիոյ հայկական ընկերութիւններու կողմէն հեռագիրներ և նամակներ:

5) Բօրիս Սարաֆով, մակեդոնական գործադիր կոմիտեի նշանաւոր պետը հետեւեալ նամակը ուղարկած էր:

Հայ Ռեսանդական Համագումարին, Ժընէվ

Սիրելի ընկերներ,

Հատ խօսեալ է հարստահարածներու բարոյական համբարաշխութեան և անոնց միաձայն տառապանքներուն վրայ: Երազի սահմանին մէջ եղած համբարաշխութիւնը պատրանք է: Իրական համբարաշխութիւնը, ինչպէս կ'ըմբռնեմ, գործելու որոշումէն կը ծնի և երևան կուգայ գործունէութեան մէջ:

Այսպիսի համբարաշխութիւն մը պէտք է կապէ հայերը և մակեդոնացիները միեւնոյն յամառ կուին մէջ, մեզ հարստահարող լէժիօն գէտ:

Համոզեալ եմ խանդավառ կուսակից նմանորինակ համաձայնութեան մը, միշտ պնդած եմ անոր աննահանջ պէտքը և բարոյական գեղեցկութիւնը: Մակեդոնական Բարձր Կոմիտէին նախագահ ընտրուեցաւ թէ չէ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ, Լահէի Ահհաթողլին առթիւ, միասին Յայտարարութիւն մը ստորագրեցին: Անկէ ի վեր, միշտ ներշնչեալ եմ այն հանգիստաւոր խոստումէն, զոր մէկտեղութիւնը Եւրոպայի առջև, թիւրք բռնապետութեան դէմ համբարաշխ ու միացած կուելու համար:

Ինչի կը թւի թէ ժողովուրդը, ուր մենք այս միութիւնը մեր արիւնով նորէն պիտի կնքենք պատերազմի դաշտերուն վրայ, ուր միայն պէտք է վճռել մեր ճակատագիրը:

Այդ գերագոյն ժամուն, հաստատ գիտեմ, որ հայ յեղափոխական երիտասարդութիւնը, որ նոր ժամանակներու ապստամբութեան քանի մը էն գեղեցիկ ժեստերը յիշելով, միահամուռ հօն պիտի ըլլայ իր պարտականութիւնը կատարելու համար, այս յոյսով է որ եղբայրարար կ'ողջունեմ զայն Ժընէվի Համագումարին մէջ:

Բ. ՍԱՐԱՖՈՎ

Դիւանի ընտրութենէն յետոյ պ. Խ. Մալումեան ներկայացուց Միութեան՝ վերջացող տարիին մէջ կատարած գործունէութեան համարաւորութիւնը, ուր կերեւար որ հայ Ռեսանդական Միութիւնը կարեւոր յառաջգիծութիւններ ըրած էր կազմակերպութեան ու պրօպագանտի ճամբուն մէջ: Լիազօր կոմիտէն, որ երկու տարի կ'ընէ Ժընէվ հաստատուած է, իր ծրագրի ոգու համաձայն պ. Ֆ. զը Պրեսանսէի բանախօսութիւնը կազմակերպեց Ժընէվի մէջ, պ. Պիէռ Բիլառ Սօնաքօ Խաղաղութեան Համաժողովին պատգամաւոր ուղարկած էր հայկական դատը պաշտպանելու համար և հրաւիրած էր գերմանացի նշանաւոր ընկերավարական պ. Էդ. Պերնշտայն Բերլինի մէջ բանախօսութիւն մը ընել ինպատակ հայոց կոմիտէն ծրագրած է նմանապէս Հռոմի և Բրիւքսէլի մէջ դասախօսութիւններ սարքել, տեղական հեղինակաւոր անձնաւորութիւններու ձեռքով, Եւրոպայի հասարակական կարծիքը հայոց հարցով շահագրգռելու համար:

«Հայաստան և հայկական հարցը» մեծ հրատարակութեան համար, որ նպատակ ունի հայ ազգին անցիալը և ներկան, իր տառապանքներն ու կոնիւնքը Եւրոպային ճանչցնել, Լիազօր կոմիտէն ստացած է շարք մը յօդուածներ ու համակրական կոչեր Եւրոպայի նշանաւոր գիտուններէ, գրագէտներէ և ըն, ինչպէս Էլիզէ Ռէկլիւ, Լամբրոզօ, Էրնէստ Նալիլ, Ֆրէտերիկ պասսի, Լամպրէտտ, Պայէր, Լօրիա, Նովիքով և զեռ շատեր:

Համարաւորութենէն յետոյ նախապէս պատրաստած ծրագրին կարգով սկսան բանախօսութիւնները, որոնք ուղղակի առնչութիւն ունենին հայկական հիւն կամ նոր կեանքի հետ:

Դասախօսներէն ոմանք իրենց նիւթին մէջ շօշափած էին կովկասահայ իրականութենէն մէկ քանի կարեւոր խնդիրներ, որոնք յարուցին երկարատե վիճարանութիւններ, որուն իրր հետեւեալ ընդունեցաւ Մ. Յ.-ի առաջարկած հետեւեալ բանաձեւը.

«Ե. Ա. Ռ. Միութեան Ծրագր հաւոյժողովը՝ պնդելով՝ որ թրքահայերուն դատը իր ներկայ տուր, հրատապ, ստիպողական կերպարանը, որով առաջնակարգ խնդիրն է աւիրող հայութեան համար, միաձայն ցանկութիւն կը յայտնէ, որ կովկասահայ ինտէլիկենցիան իր ուշադրութիւնը կ'ընդունի պիտի գլխաւորապէս այդ խնդրի շուրջ»:

Համագումարին աշխատութիւնները տեւեցին մէկ շաբաթ: Համագումարը՝ իր վերջի նիստին մէջ՝ առաջիկայ տարւան համար կայացուց կարգ մը որոշումներ, որոնցմէ հետեւեալները միայն հրատարակութեան կը տրուին.

1) Յօգուտ Հայաստանի կազմակերպել բանախօսութիւններ Գերմանիոյ և Իտալիոյ շատ մը կարեւոր կեդրոններու մէջ.

2) Հող պատրաստել Գերմանիոյ մէջ հայկական դատը պաշտպանելու համար, յատուկ օրկան մը հրատարակելու գերմաներէն լեզուով:

3) Բոլոր աշխարհի Ռեսանդներուն կոչ մը ուղղել, որ մամուլի և բանախօսութիւններու միջոցով պրօպագանտ ընեն Հայաստանի համար:

4) Թիւրքիոյ և Կովկասի մէջ հայկական հարցի մասին խօսելու անհնար ըլլալով, համագումարը որոշեց այդ նպատակով Եւրոպայի մէջ հրատարակութիւններ ընել:

5) Ընթացիկ տարւայ պրօպագանտի ծախքերուն և հրատարակութեանց համար 25,000 ֆրանքի պիւտձէ մը որոշեցաւ: Ներկայ եղողները անմիջապէս ստորագրեցին 5,000 ֆրանքը: Մեծ Ժողովածուն համար որոշեալ է ծախսել 15-20,000 ֆրանք:

Համագումարը միաձայնօրէն որոշեց նաեւ իր բուն համակրութիւնը յայտնել 1) «Պրօ Արմէնիայի» խմբագրական մարմին, 2) բոլոր հայասերներուն, 3) մակեդոնական ժողովուրդին և 4) բոլոր հարստահարած ազգերուն:

Որոշեց յայտնել իր հակակրութիւնը՝ Բազէլի սիօնիստներու կոնգրէսին, սուլթանի հետ ունեցած համակրական հեռագիրներու փոխանակութեանը համար:

Համագումարը գոհունակ ծափահարութիւնով ընդունեց Սօնաքօի Խաղաղութեան համաժողովին հայկական հարցի մասին քեւարկած որոշումը աւետող հեռագիրը, ստացեալ պ. Բիարէն:

Վերջի պահուն, աւստրիական լրագիրներուն Պօլսէն հետեւեալ հեռագիրը կուտային.

«Սուլթանը հրաման ղրկեց Բարիզի զեսպան Միւնիք պէյին և Զւիցերիոյ տաճկական ընդհանուր հիւպատոսին, ամէն ջանք ու միջոց դործ գնել՝ հայ Ռեսանդներու համագումարը արգիլելու համար»:

Ինչ սարսափելի ականջներ ունին սա բռնակալները՝ կ'ըսեն Յօրնազ:

Համագումարը ցրեցաւ իր ջերմ համակրութիւնը և երախտագիտութեան զգացմունքները յայտնելով Զւիցերիոյ կառավարութեան և Ժընէվ քաղաքին:

Առաջիկայ համագումարը տեղի կ'ունենայ 1903 ապրիլ 1-ին Պրիւքսէլի մէջ:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՇԱՐՈՒՄԸ

Մակեդոնիան, սարսափի, սպանութիւններու, գաղա- նութիւններու ընդարձակ ասպարէզ մ'եղած է: Սուլթանը լիպզորութիւն տաւ է իր պօրքերուն, կառավարիչներուն, նոյնիսկ միւսիւրման ամբոխին, անպատիւ հայածեղ մակե- դոնացիները և խեղդել ամէն շարժում: Արդէն կը չարաչա- շակի որ Մակեդոնիան պիտի դատապարտուի Հայաստանի արիւնի ճակատագրին, եթէ նախկին միջամտութիւն չըլլայ: Սուլթանը 70,000 զինուոր կեդրոնացուցած է Մակեդոնիոյ մէջ, հրամայած է զինել միւսիւրման ամբոխը, որպէս զի փոքրիկ խլրտում մը եղածին Մակեդոնիան արիւնով ջրհեղեղեն:

Մակեդոնացիները, հակառակ նեղքին և արտաքին բարդ ու դժբախտ պայմաններուն, անվհատ և հերոսա- րար կը շարունակեն իրենց ազատագրութեան կատաղի կռիւը. ամէն օր մահացու ընդհարումներ հայդուկներու և զօրքերու միջև:

Իրենց դատը եւրօպայի խղճին աւելի մօտեցնելու համար, անցած տարի ժընէվի մէջ օրկան մը հիմնեցին ֆրանսերէն լեզուով՝ L'Effort (Չանք), որ իր լուրջ պա- րունակութիւնով եւրօպական մամուլին ուշադրութիւնը հրաւիրեց Մակեդոնիոյ վիճակին վրայ:

Քանի մը ամիս դադարէ ետք, նոյն թերթը Մակե- դոնական շարժումը՝ անունով վերսկսաւ. հրատարակիլ Փարիզ, մեր բարեկամ պ. Բառեվի խմբագրութեամբ, որ մէկ քանի անձնէր ընկերներու աշխատակցութիւնով այնքան ձեռնհասօրէն և արժանաւորօրէն կը ներկայացնէ իր տառապած ժողովուրդին դատը եւրօպայի առջև:

Մակեդոնական շարժումը՝ նոյն դերը պիտի կատարէ եւրօպայի քաղաքական և հանրային կարծիքին առջև, ինչ որ Պրօ Երմենիան՝ հայոց համար, այն է լուսա- ւորիլ և պատրաստել քաղաքակիրթ աշխարհի միտքն ու սիրտը երկու թշառ ժողովուրդներու վիճակի մասին, և սուլթանի կատարած անլուր գաղանթութիւնները հրեղէն տառերով մատնանիշ ընել հանրային խղճին:

Երկու օրկանները, ընտրական եղբարութիւնով մը, փոխադարձաբար արձագանք կուտան Հայաստանէն ու Մակեդոնիայէն եկած արիւնի աղաղակներուն. միևնոյն արդարութեան իտէալը, միևնոյն նպատակը կը միացնէ զանոնք, ինչպէս իրենց քաջարի հերոսները պատերազմի դաշտին վրայ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Դ Ն

Լ. Պ. Կեդր. Կօմիտէն

ՈՍԿԵԶԼՆՔԻ կեդր. կօմիտէն՝ 1901-ի հաշուէն՝ «Աղանի» իւ. Աղանի, Լուսին, Արա, Արթուրակ 41. 25 դահեկան, Գլխարկ 2 անգամ 74. 25, ԱՐՇԱԿԱՆԻՆ 30 ֆր., «Անճաղակ», «Ծրկիւղած», «Ազգասէր», «Միութիւն եւ Մէր» խմբերէն 235. 125, Արարատ 132, «Որոտում» իւ. 641, Անուշան 99, պատկերի վաճառումէ 26, 1902-ի հաշիւ, գոյքանէր, ՊՂՆՁԱՔԱՂԱՔԻՆ՝ նրբամիտ 24. 20, Եր- կաթ, Մանիֆաթուրա, Վրէժ, Առիւծ, Սուր, Արթուն 33-ական, Ոմ 8. 30, Կարիճ 28, Ոմ 7, Սօսի 10. 20, Տիրայր 52. 20, Յոյս 7, ՀՈՒՐ ԵՐԿԱՅԻՆ՝ յաշագող 17. 20, Շանթ, Կրակի կտոր, Գամ, Մէր 89. 10-ական, Մի ոմ 66, Փուլ 75, Մի ոմ 66, Անվարձ 35, Սուր 178. 20, Բաշագործ 99, Պատրիմաճի Հաճի Մուսթաֆա 99, Գրիշ 33, Վստաճ 132, Ծումն 82. 20, Ազգասէր 178. 20, Բա- թիւ Սաբգիս 70, Բանասէր 77, ԿԱՄԱՐԷՆ՝ Միքո Մուխի 33, Ժառ, Ժաղիկ, Աղբիւր 82. 20, Աղանի եւ Լուկեթ 33, Բար 7. 20, ԱՐՔՊ. քղ.-Էն 115, «Որոտում» իւ. 33, «Որոտում» խումբի վի- ճակահանութենէ 31. 15, «Գիսաւոր» իւ. 52, «Աղանի» իւ. 34. 25, Թ. Համբ. 10, «Աղանի» խումբի Անաստէ 33, Հայ ոմ 82. 20,

Պերճ 16. 20, Շաւարշի ծնումը 99, Բար 20. 25, Բորնի (յունի.) 17. 15, Բորնի (փետրվար եւ մարտ) 34. 25, Գլխարկ 2 ան- գամ 66, ԱՐՇԱԿԱՆԻՆ խումբերէն 354. 30, Վեցհարածնաւէ եռամիս 99, Միսակէն 46. 25, «Թաթուէ» խումբի նիւաւիսլ ան- դամներէն (յունի. փետր. մարտ) Այրիք եւ Թաթուէ 74. 10, Գրիշ եւ Սագ 74. 10, Պետո, Ավիշ, Միշրան, Պոլոսնի, Առա- քել, Սիմօն, Կարապետ, Մանգիկ, Լշուր, ԿԱԼԱ՝ 24. 30-ական, Արագ 49. 20, Ուռու, Երկաթ, Սամուէ, Աթա, Կրակ 8, 10-ական դահեկան: Գումար 5831 դահեկան՝ 16 ֆարսյ:

ՈՍԿԱՆԱԳԱՏԻ Կօմիտէն

Փետրվ. 1902 միշնե Վարտի 1-ը 1902-ի Նոյեմբ.-Արիւր իւ. (Նոյեմբ.) 42 անգամ, «Հրազդան» իւ. (յունի. փետրվ.) 26, Հրաշխայ 10, «Սերոբ-Աղբիւր» խմբի երեկոյթի մնացորդ 22, օր. «Աստղեր» խմբ. 150, օր. «Յոյս» խմբ. 300. 3. Ս. եւ Գ. 50, Շէրօ-Հաթօ (ղեկմ. յունի.) 22. 30, հին ապստիկ Կ.-ից 10, «Ար- մատ» խմբ. 9. 5, «Երկունք» խմբ. 25, «Սիւնիք» խմբ. 18, Բ.-ից աւետիսի մնացորդ 3, «Վագր» խմբ. 5. 50, Ա.-ից աւետիսի մնա- ցորդ 20, «Հրազդան» խմբի ներկայացումից 40, գրաւ դրամ 1 եւ 1 կարգի վիճակահանի տոմսեր 690, ստացւած թէւ.-ինստ- մատուրից 200, «Բորն»-ի ներկայացումից 80. 60, «Անուն» խմբ. 30. 50, «Զանգ» խմբ. 20, աւետիսի մնացորդ 5, հին ապստիկ Պարսկաստ. ստացւած 25: Գումար 3119 ուրքի 40 կօպէկ:

ՐՈՒՄԱՆԻՍ

ՍՈՒԽԻՆԱՅԻ «Դանտ» նիւաւիսլիտէն՝ Ժողովուրդէն հանգա- նաւոր 326. 10 ֆարսյ, «Նոր-դար» խմբ. (յունի. փետր. մարտ) 104, «Կարին» խմբ. 68, «Տարուն» խմբ. 32. 50, «Կագուէ» խմբ. 33. 20, երեք ներկայացումներէ 11: Գումար 574 ֆր. 80 ամսթիւ: ԶՕՍՏԼՆՁԱՅԻՆ նիւաւիսլիտէն՝ «Դանտ» խմբ. 30 ֆարսյ, «Չորս-Գամ» խմբ. 30, «Աղբիւր» խմբ. 24, քաջ նիւաւիսլիտէն գոյացւած 15, «Ժողով» խմբ. 10, «Հեռուստան» խմբ. 4. 50, հա- մակրոններէ ստացւած Արծիւ 10, Պաւլիայ 2, 1. Հայկ 1. 50, Մ. Խ. 5, Պ. 8. 5, Մ. Մ. 2, Տէպարակ 3, Ն. Օ. 6: Գումար 148 ֆր.:

ՎԻՃԱԳԻ Կեդր. Կօմիտէն

Կաւր 20 դուրուշ, Հոսանք 3, ֆէնէլոն 40, Թաթուէ 50, Փայ- րակ 20, «Կախաղան» խմբ. 5, «Հայրենիք» խմբ. 26, Հիտրայ 5 եւ 20: Գումար 189 դուրուշ:

ՎՐԻՊԱԿ. «Իրօշակ» 1900 թիւ 10, ՎՐԻՊԱԿ «Մա» կօմի- տէի «Կամ» իւ. 6 դուրուշ, «Մօսին» իւ. 56 դրշ. փոխարէն պիտի ըլլայ «Կամ» իւ. 56 դրշ., «Մօսին» իւ. 6 դրշ.:

ՎՐԵԺԻ Կեդր. Կօմիտէն

Հ. Յ. Դ. տամնամեակի առթիւ, Թերթ Ն՝ 5-ով ստացւած է Մ. Բէկ, Մ. Խ., Վ., Սաթ., Հ. Յուս., Դ. ա., Մ., Բ., Հ. Բ., Մ. Ա., Տ. Ն՝ 4, Ոմ, Եղ. Տ. Գ., Տ. Բ., Աղ. Մ., Ա., Արշ., Ոմ, Խ. իւ., Թ. Բ. 3-ական թուման, Հ. Ա. 1, Ա. ա., Տ. Ա. Կ., Ոմ, Տ. Բ. 3-ական, Ա. Մ. Ս. 1, Վարդ 5, Բժ. Թ. 5, Վրէժ- Արուս 1, Սուպ., Ա. 5-ական դրան, Հ. Բաքա 6, Պանդուխտ 2 թում., Անցորդ 4, Բ. Եղ. 2: Գումար 72 թուման 6 դրան: Թերթ Ն՝ 6-ով Բ. Մ. Դ. 10 թուման, իշխան 5, Ծա՝ Թի- սուս 5, Ոմ 2, Անիշխանական 2, Սուրէն 2, ազատական 1, Բամբան 1, Նշտար 1, Ոմ 1, Մ. Բ. 1, Սիւնի 5, Գիւ. 10, Ս. 5: Գումար 51 թուման: ՎՐԵժ կօմիտէից՝ Ոմ 7 թուման, Հ. իւ. 5, Ա. իւ. 5, Խ. ա. 5, Բէգ 10, Պարթ 7: Գումար 39 թուման:

ԱՆՔՍԱՆԴՐՈՅ Կօմիտէն

Սարգստ 58 դահեկան ողջ, Շմաւոն 46, Գուրգէն 15, Սաթօ 15, Արմինի 10, Զոհրապ 12, Կարօ 36, Հայկ 5, Զինամշանի վիճակահան. զուտ հասոյթ 926, Հակագիւլէն Գ. Մ. 195. Բ. Տ. 97. 50, Ամր 50, Բ. Փափագ, Ա. Ա., Թ. Մ., Բ. Ս. 40-ական, Ա. Գ., Յարօ-Թաթուէ, Խօշից 30-ական, Գ. Բ., Խ. Ա., Գ. Տ. Դ., Գ. Ա., Մ. Ա. 20-ական, Բիւք. Ա. Ս. Ն., Կ. Ե., Բարսեղ, Բ. 2., Հ. Բ. 10-ական, Օմիկ 5, Ոմ 2, Ս. Օ. 50, Գեղամ 20, տիկին Դ. Ա. 16: Գումար 1917 դահեկան ողջ:

Լ Ո Յ Վ Տ Ե Ո Ս Ի

ԱՄԲՈՒՍՅԻՆ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՏՆԱԾ «ԴՐՕՇԱԿ»-ԻՑ)

Գինն է 50 սանգիմ, ճանապարհածախսով 60 սան- տիմ: Դիմել:

Rédaction de «Droschak», Genève (Suisse)